Ազգ

AZG
armenian newspaper

Մարս 21
1992
Շաբաթ

եռօրեայ թերթ
տարի, թիւ 21 (113)
գինը 95 կ.

Երեւան 375010
Հանրապետութեան 47

դասիչ 69149

հեռ. 581841, ֆաքս 562941, տելեքս 243266 SULASU

Նաջիբուլան պատրաստ է զիջել

Հայազգի դիվանագետ Բենոն Սեւանի եռօրյա շփումներից հետո Աֆղանստանում խաղաղություն հաստատելու հեռանկարները հուսալի են դարձել, մանավանդ այն բանից հետո, երբ նախագահ Նաջիբուլան հայտարարեց, թե պատրաստ է իշխանությունը զիջել ընդդիմադիրների հետ համաձայնեցված ժամանակավոր մի կառավարության: Հայազգի դիվանագետը, որ արդեն երկրորդ տարին է, ինչ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ բանագնացն է աֆղանական խնդրով, կռվող բոլոր կողմերի հետ բանակցություններ վարելուց հետո հույս է հայտնել, որ ՄԱԿ-ի հովանավորությամբ կողմերը կարող են կազմել ժամանակավոր մի կառավարություն՝ վերջ տալով 13 տարի շարունակվող արյունահեղությանը: ■

Իրանի փոխարտգործնախարարը Ղարաբաղում

Մարտի 20-ին Աղդամի ճանապարհով Ստեփանակերտ ժամանեց Իրանի պատվիրակությունը. Իրանի արտգործնախարարի տեղակալ Մահմուդ Վայեզիի գլխավորությամբ. հաղորդում է ԼՂՀ-ի Գերագույն խորհրդի լրատվական կենտրոնը: Իրանական պատվիրակությունը Լեռնային Ղարաբաղի հանրապետության իշխանություններին ներկայացրեց մեկշաբաթյա զինադադարի առաջարկություն, ըստ որի, մարտի 20-ին, ժամը 12-ին պետք է սկսվեր զինադադարը: ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ Արթուր Մկրտչյանը, Նախարարների խորհրդի նախագահ Օլեգ Եսայանը եւ այլ պաշտոնական անձիք ընդունեցին այդ առաջարկը՝ հաստատելով, որ այս մի քանի օրերի ընթացքում Ադրբիջանը պետք է ամբողջովին վերացնի ԼՂՀ-ի շրջափակումը եւ խաղաղ բանակցությունների ժամանակ ԼՂՀ-ն ճանաչի որպես իրավահավասար կողմ: Իրանի պատվիրակությունը խոստացավ ադրբիջանական կողմին փոխանցել Լեռնային Ղարաբաղի հանրապետության պահանջը:

Ինչպես տեղեկացանք, տեղական ժամանակով ժամը 13-ին ադրբիջանական կողմը խախտել է կողմերի միջեւ Իրանի միջնորդությամբ նախօրոք ձեռք բերված եւ վերանորոգված համաձայնագիրը: Շուշիից հրետակոծություն էր սկսվել Շուշ եւ Քարինտակ գյուղերի վրա: Հրետակոծվում էր նաեւ Շահումյանը: ■

Հարձակում զորամասի վրա

Մի խումբ զինված ադրբիջանցիներ Մինգեչաուրի մոտ տեղակայված հակաօդային պաշտպանության տիպամասում բռնագրավել են զենիթային հրթիռների C-75 կայանքներ, որոնք նախատեսված են օդուժի ոչնչացման համար: Գերի են վերցվել կայանքները սպասարկող 15 զինծառայողներ: ■

ԱԺՃ-ն պատրաստվում է երկրորդ ճակատը բացել Մեղրիի կողմից

Ադրբիջանի ազգային ճակատի Զանգեզուրի եւ Օրդուբադի շրջանային խորհուրդները ներկայումս ակտիվորեն քննարկում են Հայաստանի դեմ Մեղրու շրջանի կողմից երկրորդ ճակատի բացման հարցը: Նրանք մտադիր են այդտիսով հետապնդել ռազմական գործողությունները Ղարաբաղում: ■

Կրկին հարձակումներ Նոյեմբերյանի վրա

Մարտի լույս 20-ի գիշերը Ադրբիջանի Ղազախի շրջանի կողմից հրետակոծություն է սկսվել Նոյեմբերյանի շրջանի Ոսկեպար, Բաղանիս եւ Ոսկեւան գյուղերի վրա: Կան ավերածություններ եւ երեք վիրավոր: Երեկ, կեսօրի դրությամբ հրետակոծությունը դադարել էր: ■

ԿԻԵՎ. ՍՏԵՂԾԵԼ ԵՐԿՆԱԳՈՒՅՆ ՍԱՂԱՎԱՐՏՆԵՐ

Ղարաբաղի հարցը քննարկման առարկա

Երեկ Ուկրաինայի մայրաքաղաք Կիեւում տեղի ունեցավ ԱՊՀ-ի անդամ երկրների ղեկավարների հերթական հանդիպումը, որին մասնակցում էին ինքնիշխան պետությունների 8 նախագահներ, ինչպես նաեւ Բելառուսի եւ Թուրքմենստանի խորհրդարանների ղեկավարները: Աղբիջանը ներկայացնում էր հանրապետության պետական քարտուղար Միքիայել Աբասովը: Դիտորդի դերում մասնակցել է Վրաստանի ժամանակավոր կառավարության ղեկավար, պետխորհրդի անդամ Թենգիզ Սիգուան:

Բացելով գագաթաժողովը, Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կրավչուկը հույս հայտնեց, որ խորհրդակցությունը բեկումնային կլինի հանրակցության զարգացման գործում: Նա նշեց, որ ԱՊՀ-ի սահմաններում դեռ չի հաջողվել լուծել *«ոչ մի խոշոր քաղաքական, ռազմական եւ տնտեսական հարց»:*

Հանդիպման նախագահ ընտրված Ուզբեկստանի ղեկավար Իսլամ Քարիմովը նույնպես համաձայն էր, որ ԱՊՀ-ի առջեւ կան բազմաթիվ չլուծված խնդիրներ, ինչն իր արձագանքը գտավ գագաթաժողովի ծավալուն օրակարգում:

Օրակարգն ընդգրկում էր ավելի քան 20 հարց: Օրվա առաջին կեսին քննարկվել է ռազմական հարցերի ծարը եւ համաձայնեցվել են 10 փաստաթղթեր՝ ԱՊՀ-ի միացյալ զինված ուժերի վերաբերյալ: Դրանք են. մասնավորապես, «Պաշտպանության հարցերով ԱՊՀ-ի բարձրագույն մարմինների լիազորությունների մասին համաձայնագիրը», «ԱՊՀ-ի միացյալ զինված ուժերի գլխավոր հրամանատարության մասին որոշումը», «Ընդհանուր նշանակության միացյալ զինված ուժերի կարգավիճակի մասին համաձայնագիրը», «Սպառազինություններով, ռազմական տեխնիկայով եւ այլ նյութական միջոցներով հանրակցության զինված ուժերը ապահովելու սկզբունքների մասին դայմանագիրը» (Ուկրաինայի տարբերակը), «Հանրակցության անդամ երկրների պետական սահմանների եւ ծովային տնտեսական գոտիների պահպանման մասին համաձայնագիրը» (Մոլդովայի տարբերակը): Գլխավոր շտաբի ստեղծման մասին համաձայնագիրը: Այդ զինված ստորաբաժանումը, որը ինչ որ բանով կնմանվի ՄԱԿ-ի «երկնագույն սաղավարտակիրներին», չի մասնակցելու մարտական գործողություններին, այլ միայն բաժանելու հակամարտ կողմերին եւ թույլ չի տալու ազգամիջյան ընդհարումների ընդլայնմանը: Նագորնի Ղարաբաղի մասին հարցը հաղորդեց, որ այդ հարցի շուրջ տեղի են ունենում բուռն վիճաբանություններ: Հայաստանի նախագահը հավանություն է հայտնվել գեներալ-գնդապետ Վիկտոր Սամսոնովը, ստրատեգիական ուժերի հրամանատար բանակի գեներալ Յուրի Մատսիմովը, Ընդհանուր նշանակության զորքերի հրամանատար գեներալ-գնդապետ Վլադիմիր Սեմյոնովը:

Ինչպես հայտնի դարձավ, այդ համաձայնագրերը կնքելու դատարտակամություն են հայտնել միայն այն պետությունները, որոնք մտադիր էին մասնակցել միացյալ զինված ուժերի ստեղծմանը՝ Բելառուսը, Թուրքմենստանը, Հայաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ռուսաստանը եւ Տաջիկստանը:

Ղազախստանի նախագահի մասին դեռ չի հաստատվել գեներալ-գնդապետ Սերգեյ Մատսաեւը լրագրողներին հաղորդեց, որ օրվա վերջին կարող է ստորագրվել խաղաղությունը դաշտպանելու եւ ազգամիջյան ընդհարումները կանխելու նդատակով ուժերի, ինչպես նաեւ ռազմական դիտորդների խմբի ստեղծման մասին համաձայնագիրը: Այդ զինված ստորաբաժանումը, որը ինչ որ բանով կնմանվի ՄԱԿ-ի «երկնագույն սաղավարտակիրներին», չի մասնակցելու մարտական գործողություններին, այլ միայն բաժանելու հակամարտ կողմերին եւ թույլ չի տալու ազգամիջյան ընդհարումների ընդլայնմանը: Նագորնի Ղարաբաղի մասին հարցը հաղորդեց, որ այդ հարցի շուրջ տեղի են ունենում բուռն վիճաբանություններ: Հայաստանի նախագահը հավանություն տվեց այդ գաղափարին, իսկ Աղրբիջանի ներկայացուցիչները անհրաժեշտ գտան խորհրդակցել հանրապետության Գերագույն խորհրդի հետ:

Համաձայնեցված փաստաթղթերի ծարը նախատեսվում էր ստորագրել ուշ երեկոյան:

Հանդիպումից հետո տեղի ունեցած մամուլի ասուլիսում, դատասխանելով լրագրողների հարցերին, Ի. Քարիմովը հայտարարեց, որ հանդիպմանը քննարկվել է Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի կարգավորման հարցը: Քննարկման մանրամասները դեռ հայտնի չեն ■



Մարտի 20-ին ԱՊՀ-ի երկրների ղեկավարների հանդիպման օրը Ուկրաինայի հայ համայնքը կազմակերպեց հանրահավաք:

Լուսանկարները Մարտին Շահբազյանի

Անդրկովկասի ռազմական օկրուգն անցնում է Ռուսաստանի իրավասության տակ

Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի հրամանագրով, Մերձբալթյան սահմանադրական օկրուգի զորքերն անցնում են Ռուսաստանյան Ֆեդերացիայի իրավասության տակ եւ ենթարկվում են սահմանադրական զորքերի գլխավոր հրամանատարին:

Այլ հրամանագրով Ռուսաստանի ժամանակավոր իրավասության տակ են անցնում Անդրկովկասի ռազմական օկրուգը եւ Կասպից ծովի ռազմածովային նավատորմը, որոնք կենթարկվեն ԱՊՀ-ի միացյալ զինված ուժերի գլխավոր հրամանատարին:

Նրան եւ Ռուսաստանի կառավարությանը հանձնարարվել է ստեղծել կառավարական դատվիրակություններ Աղրբիջանի, Հայաստանի եւ Վրաստանի հետ անհապաղ բանակցություններ վարելու եւ այդ պետությունների տարածքում տեղակայված ԱՊՀ-ի զինված ուժերի իրավական կարգավիճակն ու կեցության դայմանները քննարկելու համար

Գեներալ-գնդապետ Վալերի Պատրիկեեւին հանձնարարվել է միջոցառումներ ձեռնարկել զենքի եւ տեխնիկայի բռնագրավման դեմ, ինչպես նաեւ թույլ չտալ զորքերի միջամտությունը անկախ պետությունների ներքին գործերին: ■

Հարավաֆրիկյան սպիտակամորթները՝ խտրականության դեմ

Հրապարակվեցին Հարավ Աֆրիկյան Հանրապետությունում միայն սպիտակամորթների համար անցկացված ցեղային խտրականության մասին հանրաքվեի արդյունքները: 68,7 տոկոս կողմ եւ 31,3 տոկոս դեմ ձայներով երկրի 3 միլիոն սպիտակամորթներն իրենց համաձայնությունը հայտնեցին վերջ տալ փոքրամասնության իշխանությանը եւ քվեարկելու իրավունք՝ 30 միլիոն սեւամորթներին:

Արդյունքների վերջնական ամփոփումից հետո վարչապետ Քլերքը հայտարարեց. *«Այսօր մենք վերջնականապես փակեցինք ցեղային խտրականության գիրքը»:*

Իր հերթին, սեւամորթների առաջնորդ Նելսոն Մանդելան ողջունեց արդյունքները եւ միաժամանակ զգուշացրեց, որ սա պետք է լինի *«միայն սպիտակամորթների համար»* սկզբունքով վերջին հանրաքվեն: ■

Սայրըս Վենսը Ստեփանակերտում

Երեկ, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ բանագնաց Սայրըս Վենսը ժամանել է Ստեփանակերտ: Ինչպես հաղորդեցին իրազեկ աղբյուրները, Ս. Վենսի՝ Ստեփանակերտ ժամանելուն նախորդել է Շուշիի կողմից քաղաքի հրետանակոծությունը, արձակվել է 2 արկ: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի բանագնացը հանդիպել է ԼՂՀ-ի Գերագույն Խորհրդի նախագահ Արթուր Մկրտչյանի եւ Նախարարների Խորհրդի նախագահ Օլեգ Եսայանի հետ: Վենսը Ստեփանակերտում նույնպես կրկնել է, թե ինքը ժամանել է լոկ փաստեր հավաքելու եւ այն ներկայացնելու ՄԱԿ: ■

Լիբանանի քաղաքացիական պատերազմի զոհերի թիվը՝ 144.000

«Ան Նահար» թերթի հրապարակված վերջին տվյալների համաձայն, լիբանանյան 15-ամյա քաղաքացիական պատերազմի զոհերի թիվը 144 հազար է, իսկ վիրավորներինը՝ 200 հազար: Այս թվերի մեջ չեն ներառվել Լիբանանում դատնստիցիների կրած կորուստները: Նրանց շարքերից սպանվել է 6630 մարդ եւ վիրավորվել 8000 հոգի:

Բացի այդ, դեռեւս անհայտ է մնում 17 հազար 415 հոգու ճակատագիրը: Երեւանից 13 հազար 968 հոգին առեւանգված են, որոնք մահացած են համարվում:

15-ամյա պատերազմի ընթացքում սպանված են նաեւ 241 ամերիկացի զինվորներ եւ Ֆրանսիացի 53 դարաշրջանիստներ: ■

Իսրայելի վարչապետը՝ ուղղակի ընտրություններով

Չորեքշաբթի օրը իսրայելյան խորհրդարանը վավերացրեց օրենքի նախագիծ այն մասին, որ սկսած 1996-ից Իսրայելի վարչապետը ընտրվելու է ժողովրդի ուղղակի քվեարկումով:

Նկատի է առնվում այն հանգամանքը, որ առ այսօր Իսրայելում որեւէ կուսակցության չի հաջողվել առանձին հաղթանակ տանել ընտրություններում: Նրանք միշտ էլ մանր կուսակցությունների ձայների կարիքն են զգացել, ինչը վերջիններին առիթ էր տալիս երկար սակարկություններ անել դաշտոններ եւ դրամ կորզելու համար: ■

Դրամի փոխանցումները սահմանափակվում են

Հայաստանում կանխիկ դրամի դակասի հետեւանքով սահմանափակվել են բնակչությանը տրվող դրամի փոխանցումային վճարումները: Այդ մասին հաղորդեցին Հայաստանի կառավարությունում: Այսուհետեւ փոխադրության գումարը չդետք է գերազանցի 500 ռուբլին: Ավելացած գումարը կգնա խնայդրամարկղ, ստացողի հաշվին: Սահմանափակվում է նաեւ դրամի փոխանցումների ընդունումը, որոնց գումարը նույնպես չդետք է գերազանցի 500 ռուբլին:

Կառավարության ատաստակիցը նշեց, որ այդ սահմանափակումները մտցվել են Ռուսաստանի հետ փոխադարձ դայմանավորվածության համաձայն: ■

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Բոսնիա-Հերցեգովինայի ղեկավարներն իրար հետ համաձայնեցին անկախացող այդ հարավսլավական հանրապետությունը բաժանել էթնիկական 3 գլխավոր զոհերի սերբեր, խորվաթներ եւ մահմեդականներ, փորձելով խուսափել քաղաքացիական հետագա դատերազմի վտանգներից:

Համաձայնությունը, որի մանրամասները մշակվելու են հետագայում, կայացավ Սարաեւո քաղաքում, եւրոդական խորհրդի հովանավորությամբ:

Պենտագոնը ավարտել է իրաքյան զինագործարանները ոմբակոծելու իր ծրագրերը, սակայն դատրաստ է ցանկացած դահի հարվածել, եթե Սադդամ Հուսեյնը շարունակի արգելք հանդիսանալ ՄԱԿ-ի մասնագետներին, որոնք այս օրերին վերջին փորձ են կատարելու փչացնելու համար Իրաքի «Դուդ» հրթռաձիգները: ■

digitised by A.R.A.R.@

Բարի լույսն այս բառով է բացվում Ստեփանակերտում: Ոչ ոք չգիտե, թե Աստված այդ օրն ում կխնայի եւ ում կզրկի բարի գիշեր ասելուց: Փողոցներն ամայի են, տները դատարկ, նկուղներում՝ քառանձավային կյանք: Մարդիկ համակված են վախի ու տագնապի, լավ օրվա կարոտի զգացումներով: Բայց հողի, ջրի, հայրենիքի համար տառապանքը նրանք գիտակցաբար տանում են ի վերուստ տրված արցախյան համառությամբ, գիտակցելով, որ իրենց վաղն այսօրվա մեջ է, իսկ այսօրը ծնվում է նկուղներում:

Համար առաջին նկուղը Ստեփանակերտի քաղաքային ծննդատունն է, որը տարվա սկզբին հրաժեշտ տալով իր քառամյա մասնաշենին, տեղափոխվել է Գերագույն խորհրդի նկուղային հարկաբաժին: Նախկին 120-ի փոխարեն, այստեղ ընդամենը 8 մահճակալ կա, օրվա մեջ միայն 7-8 ժամ է լույս լինում: Խավարի մեջ դատապարտված կանայք մի կերպ տանում են երկունքի ցավերը, որոնց ժամ առ ժամ ավելանում են Շուշիից արձակված արկերի առաջացրած սարսափը: Ստեփանակերտում հայ մանուկը ծնվում է «Գրադ»ի բեկորների դողդոջունի տակ: Բժիշկ Արթուր Մարությանը պատմում է, որ օրըստօրե ավելանում են վիժումները: *«1988-ից առաջ միջին հաշվով օրական երկուսս էր ծնվում, իսկ այժմ հազիվ մեկը եւ այն էլ ի՞նչ պայմաններում»*: Ծննդաբերողներն իրենք են բերում վառարանի փայտն ու օգտագործվող ջուրը: Դեղորայքի եւ սննդամթերքի պակասը ազդում է հիվանդների առողջության վրա:

Նույն վիճակն է նաեւ ծանր հիվանդների մոտ, որոնք պառկած են ծննդատան հարեւանությամբ գտնվող նախկին մարզկոմի շենքի նկուղում: Լեռնային Ղարաբաղի հանրապետության Գերագույն խորհրդի առողջապահության հանձնաժողովի նախագահ Վ. Աղաբալյանի վկայությամբ, փետրվարի 22-ից տեղափոխվել են այդտեղ եւ ամեն ինչ արել, որպեսզի գոնե ամենածանր վիրավորների համար ստեղծվեն միջ բեւ տանելի պայմաններ: *«Լույս դարմանում, գնդակների կամ արկի բեկորների առաջացրած վերքը անծանոթ է լինում»*, պատմում է Վ. Աղաբալյանը:



Հիվանդանոցում բոլորի շուրթերին մարտի 12-ին կատարված ողբալի դեպքն էր, երբ արկն ընկել էր Յաբա եւ Ռիտա Առուստամյանների նկուղի վրա, 11 եւ 12 տարեկան երեխաները զոհվել էին, իսկ ամուսինները վիրավոր տեղափոխվել հիվանդանոց: Ստեփանակերտում գտնվելուս առաջին օրը՝ փետրվարի 14-ին յոթ խաղաղ բնակիչներ զոհվեցին «Գրադ»ից արձակված արկերից: Դրանցից մեկն ընկել էր Գերագույն խորհրդի շենքի վրա եւ տեղում սպանել հերթապահ միլիցիոներին:

Քաղաքի կենտրոնական հրապարակից ներքեւ իջնող Կիրովի պողոտայով հատուկենտ մարդիկ են քայլում, երբեմն հրացաններով զինված: Գեւորգ Ազիզյանը, որը Բաքվից 1988-ից հետո տեղափոխվել էր Ստեփանակերտ, հոգարտությամբ ասում էր, որ *«ինչ էլ ազերիներն անեն, մեկ է, մեզ չեն կարող ընկճել: Սա մեր հայրենիքն է: Եւ պատրաստ ենք մեռնել նրա համար, քան ապրել թշնամու լծի տակ»*:

Նոյեմբեր ամսից Գրիգորյանների եւ էլի յոթ ընտանիքներ պատրաստվել են նկուղում: Հենրիկ Գրիգորյանը 1991-ի դեկտեմբերի 28-ին է վիրավորվել: Սենդամերիի պաշարները սպառվում են: Տիկին Լարիսան մեղավորի պես պատմում է, որ անգամ երեխաների վրա բարկանում են, երբ նրանք բարկանում են: Լույսի միակ աղբյուրը գազն է, որն առայժմ կա, քանի դեռ Աղդամը սպասարկում է Շուշիին: Տղաներից մեկը գալիս է եւ հայտնում, թե Շուշից վերադարձել են Քերոլայն Քոկսն ու Զորի Բաղայանը: Ոգեւորված լեղի Քոկսը պատմում էր, թե ինչպես են Շուշիից կրակել իրենց մեքենայի վրա, բայց վարորդը՝ Արթուր Բաղայանը, այնպիսի ճարպկությամբ է վարել մեքենան, որ անվնաս տեղ են հասել: *«Այսօր Աստված երկու բարեհաճություն արեց մեզ, մեկը մեր խիզախ վարորդն էր, մյուսը՝ անվարժ ադրբեջանցին»*, հուզմունքով ասաց նա:

Իսկ Զ. Բալայանը խոր ափսոսանքով հայտնեց, որ նույն օրը Շուշում «Գրադ»ի բեկորներից զոհվել է 105-ամյա Նուբար Սիմոնյանը:

Գիշերվա կողմ «Գրադը» դադարեց: Խորհրդավոր լռությունը դադարվեց միայն առավոտ: Իմացանք, որ հայ դաշտանդներ են բերել: Հանրապետության կենտրոնական հիվանդանոցում բգկտված բոլորով, ոչինչ չարտահայտող հայացքով մեզ էր նայում 40-ամյա Յուրա Մկրտչյանը: Երեք տարի առաջ Բաքվում բանտարկել էին ու մինչեւ հիմա տանջել Շուշիի ու Աղդամի բանտերում... Նա ոչինչ չէր հիշում, վախից չէր խոստվանում, որ ազերիներն իրեն այլանդակել են դեմքը, ոտքերը, ողջ մարմինը: Կողքի սենյակում նստած էր 38-ամյա Էլեոնորա Գրիգորյանը, որը մինչեւ վերջերս բնակվում էր Բաքվում: Փետրվարի 15-ին բանտարկել են իրեն, ամուսնուն, 4 ամյա երեխային: Անմարդկային տանջանքները հետեւում են մնացել: Տղան՝ Դիմա Բուլգակովը անմեղ, սովալլուկ հայացքով կանգնած է մոր սեղանի մոտ: Երեխային անգամ հաց չեն տվել: Էլեոնորան պատմում էր, թե ինչպես են Դիմայի ձեռքերի վրա ծխախոտս հանգցրել եւ բաս էր ափսոսում, որ իրեն փոխանակել են առողջ ադրբեջանցիների հետ: *«Նրանք ուրախ էին անցնում սահմանը, իսկ մենք հազիվ-հազ, կաղալով»*, լացակումած ավելացրեց նա:

Առավոտը բացվեց նաեւ մեր զոհված եղբայրների աճյուններով: Ղարաբաղում այլեւս չեն սգում: Ամեն մի մահ իր հետ բերում է վրեժխնդրության նոր ալիք, մի նոր ուժ՝ ավելի կատվելու պատերազմական հողին եւ այն պաշտպանելու: Եվ ինչքան էլ որտան «Գրադ»ները, միեւնույն է, օր առաջ զոհված Անդրեյի, Կարենի, Վլադիկի Ավետի, Գենադիի, Հակոբի, Աշոտի, Սեւանի ու մեր մյուս եղբայրների ու քույրերի թափված արյունը կփակի դրանց ճամփան: Եվ հաղթանակած արցախցին խաղաղությամբ կասի. *«Բարի լույս ու բարի գիշեր»*

ՀԱԿՈԲ ՍՍՍՏՐՅԱՆ
14-15 մարտ, Ստեփանակերտ

Արցախյան Օրագիր

Հրավեր իսլամականներին

Ադրբեջանի վարչապետ Հասան Հասանովը հայտարարեց, որ անհրաժեշտ է հրավիրել Իսլամական համաժողով կազմակերպության նստաշրջան Ադրբեջանում ստեղծված ծգնաժամային իրավիճակը քննարկելու նպատակով:

ԻՀԿ-ի պատվիրակության հետ մարտի 17-ին տեղի ունեցած հանդիպման ժամանակ Հասանովը որպես եղեռնագործություն բնութագրեց ադրբեջանցիների նկատմամբ հայկական կողմի քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղում: ■

Մեղադրանքներ նորերին

Ադրբեջանի ժողովրդական ճակատի Մեջլիսը մեղադրեց հանրապետության նոր ղեկավարությանը նախկին իշխանությունների քաղաքականությունը շարունակելու մեջ:

Աղդամում մարտի 17-ին տեղի ունեցած Մեջլիսի նստաշրջանում նշվեց, որ հանրապետության ներկա իշխանությունները, Այազ Մութալիբովի ղեկավարության նման, կողմ են, որ Ադրբեջանն ընդգրկվի ԱՊՀ-ի կազմում, մասնավորապես, ռազմական կառուցվածքներում: ԱԺՃ-ն Ադրբեջանը ԱՊՀ-ի անդամ չի համարում, քանի որ խորհրդարանը չի վավերացրել նրա ստեղծման մասին պայմանագիրը: ■

Նորերը հրավիրում են

Իր հերթին Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահ Յաղուբ Մամեդովը համագործակցության կոչ է հղել Ադրբեջանի ժողովրդական ճակատի նախագահ Աբուլֆազ Ալիեւին: Մարտի 18-ին Բաքվում հրապարակված հայտարարության մեջ Ադրբեջանի ղեկավարը նշել է, թե «ԱԺՃ-ի ներկայացուցիչները հանուն ազգային միասնության պետք է մտնեն կոալիցիոն կառավարության կազմի մեջ՝ ճգնաժամից խուսափելու համար»: Յա. Մամեդովը խնդրել է Ա. Ալիեւին կոնկրետ առաջարկություններ անել այդ հարցի վերաբերյալ:

ԱԺՃ-ն առայժմ հրաժարվում է ընդգրկել իր ներկայացուցիչներին կոալիցիոն կառավարության կազմի մեջ: Ժողովրդական ճակատը պատրաստ է քննարկել այդ հարցը միայն Գերագույն խորհրդի գործադիր ֆունկցիաները Ազգային խորհրդին հանձնելուց հետո: Նախատեսվում է, որ Հ. Հասանովը կառավարության նոր կազմը խորհրդարանի արտակարգ նստաշրջանի քննարկմանը կներկայացնի մարտի 24-ին: ■

Վերջը դարձավ

Ադրբեջանի պատգամավորության նոր նախարար է նշանակվել Ազգային խորհրդի անդամ, «Անկախ Ադրբեջան» ընդդիմադիր դաշինքի ներկայացուցիչ, Շուշիի պարեն Ռահիմ Դաշդիեւը: Մասնագիտությամբ մաթեմատիկոս է: Մինչեւ պատգամավոր ընտրվելը դասախոսել է Բաքվի ինժեներաշինարարական ինստիտուտում:

Իսկ պատգամավորության նախկին նախարար, գեներալ-մայոր Թահիր Ալիեւը նշանակվել է Ադրբեջանի ներքին գործերի նախարար: Նոր նշանակումների մասին այդ հրամանագրերը պետք է հաստատվեն խորհրդարանում: ■

Կողոպուտ ճանապարհին

Ինչպես հաղորդեցին ԱՊՀ-ի սահմանապահ զորքերի մամուլի կենտրոնում, լույս 18-ի գիշերը Դազախի մոտակայքում մի խումբ ադրբեջանցիներ բռնագրավել են Անդրկովկասի սահմանապահ օկրուգի 4 բեռնատար: Ավտոմեքենաները Թբիլիսիից երեւան էին տեղափոխում կապի սարքաբաժանումներից մեկի գույքը: Շարասյան վարորդներն ու ղեկավարն ազատ են արձակվել: Անհայտ ուղղությամբ փախցված բեռնատարներում զենք եւ զինամթերք չի եղել: ■

Երկուսը փիչ էր. մեկն էլ...

Մարտի 17-ին Բաքվում տեղի է ունեցել նախաձեռնող խմբի համաժողովը, որը մտադիր է ստեղծել Գեյչա-Ջանգեզուրյան ժողովրդավարական հանրապետություն:

Ստացված տեղեկությունների համաձայն, մոտ ժամանակներս նախատեսվում են դեռ չստեղծված հանրապետության խորհրդարանի եւ գործադիր մարմինների ընտրությունները: ■

Խելքը գլխին ասելի՞ք, թե միտինգացավ

Մարտի 18-ին, ժամը 14-ին Անկախության հրապարակում տեղի ունեցավ հանրահավաք, որի նպատակը, ըստ կազմակերպիչների, հայ ժողովրդի համար օրհասական այս օրերին համախմբվելն ու կոնկրետ գործողությունների ծրագիր մշակելն էր: Հանրահավաքի մասնակիցները (ըստ Ռաֆայել Համբարձումյանի՝ 6 հազար հոգի, ըստ իս՝ 3 հազար հոգի, եթե հաշվելու լինենք նաեւ մոտակա փողոցներում զբոսնողներին) սպիտված էին լսել ելույթ ունեցողների մի շարք հույժ «խորհրդաս» հայտարարություններն ու կոչերը, որոնց բկում՝ մինչ այդ հասարակությանն սնհայտ մի իրավաբանի այն կասկածահարույց հայտարարությունը, թե ՀՀՇ-ն եւ ԱԻՄ-ը նույն բանն են, կամ ուրբաթ մի պատկառազդու նանկավարժի կոչը՝ վերացնել անբծիր բոլոր կուսակցությունները:

Բայց հանրահավաքի մեխն, անշուշտ, հասարակությանը բաշածանոթ տրն, Սուլիասի ելույթն էր, որի բոցաշունչ խոսքերը հավակնում էին հրաշագործ սպեղանու նման ապաքինել հայ ժողովրդի բոլոր վերքերը: Ելույթը սկսելով իր անցած «քաղաքական պայքարի լուսավոր ուղու» համառոտ մեկնաբանությամբ՝ հետո նրն այնուհետեւ հարկ համարեց հստակություն մտցնել այն հարցի մեջ, թե այն ժամանակ հացին ի՞նչ էին ասում այսօրվա ղեկավարները: Այնուհետեւ ականավոր քաղաքական գործիչը, համեմատելով այսօրվա իշխանություններին յոթգլխանի հրեշի հետ, մի ընդարձակ դասախոսություն կարդաց հրեշների դեմ պայքարելու մեթոդների մասին եւ եկավ այն եզրակացության, որ հրեշի գլուխը պետք է կտրել: Դրան հետեւեց Ա. Բլեյանի՝ Արտաշատում ունեցած տրխրահռչակ ելույթի քննարկումը, որն էլ, ինչպես կարելի էր սպասել, ավարտվեց «Լեւո՛ն, հեռացի՛ր» վանկարկումներով:

Հարթակի վրա պրն. Սուլիասին փոխարինած Ռաֆայել Համբարձումյանն ամենից առաջ իր պարտքը համարեց ժողովրդին ամենայն պատասխանատվությամբ հավաստիացնել, թե ինքը իշխանության չի ձգտում, եւ որ Հայաստանի այսօրվա ղեկավարները չանցած մի ամիս փախչելու են Հայաստանից: Անդրադառնալով հանրապետության սոցիալ-տնտեսական ծանրագույն վիճակին՝ հռետորը կոչ արեց ուրբաթ օրը գործադուլ հայտարարել, մասնակցել եւս մի հանրահավաքի: Այնուհետեւ հանրահավաքի անունից ընդունվեց «պատմական» մի դիմում՝ ուղղված Հայաստանի ամբողջ բնակչությանը եւ խնայդրամարկղերի գանձապահներին, որում կոչ էր արվում լույսի, հեռախոսի, բնակարանի եւ այլ վարձերը վճարել հին գներով:

Իհարկե, «մեծանուն» քաղաքագետն անդրադարձավ նաեւ Արցախի խնդրին՝ պնդելով, որ դա պետք է ներկայացվի ոչ թե որպես ինքնորոշման խնդիր, այլ որպես Հայաստանի տարածքային պահանջ Ադրբեջանի նկատմամբ, եւ կոչ արեց անհապաղ կռվով գրավել Ղարաբաղը:

Ի դեպ, Ռ. Համբարձումյանը կոչ արեց նաեւ հեռուստատեսությանը եւ լրագրերին՝ առաջարկելով անպայման անդրադառնալ հանրահավաքին, ինչը եւ մենք սիրով կատարում ենք: Իսկ հանրահավաքը տարերայնորեն շարունակվեց եւս մի քանի ժամ:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Սոչիսակ. Ինչպես է բաշխվում օգնությունը

Օրերս երջանի եւ քաղաքի բնակչությանը բաշխվեց ԱՄՆ-ի Հայ Առաքելական եկեղեցուց ստացված օգնությունը: 91 հազար տուփ կարագից (յուրաքանչյուրը 458 գ) 55 հազար 358 տուփը բաշխվել է երջանի գյուղերի բնակչությանը: Մարդասիրական օգնությունը բաժանելուց հետո ԱՄՆ-ի Հայ Առաքելական եկեղեցու ներկայացուցիչ Եզնիկ վարդապետ Պալյանը, որը հենց սկզբից ներկա էր կարագի բաժանմանը, ստիպված էր կանգնել տխուր փաստի առաջ: Սոչիսակ քաղաքում գրանցում ունեցող 18.075 բնակչի օգնություն բաշխելուց հետո պարզվեց, որ 512 մարդ ընդհանրապես կարագ չեն ստացել, իսկ որոնք ընտանիքներ հասանելիքից պակաս են ստացել: Հայ եկեղեցու ներկայացուցիչը խոստացավ մոտ ժամանակներս լուծել այս հարցը: Ցավալին այն է, որ որոնք սոչիսակցիներ, մեղանչելով խղճի առջեւ, իրենց ընտանիքի անդամների թվում գրել էին նաեւ հանգուցյալների անունները:

Որքան էլ սննդամթերքի սղություն լինի, ազնվությունը վեր է ամեն ինչից: Եւ ոչ մեկին իրավունք չի վերապահված հոսախաբ անել մեզ օգնության ձեռք մեկնողներին:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

ՆԱՄԱԿԱՆԻ

Օգնեք մեզ՝ աղեսից դուրս գանք

1991 թվին հողամասերը, անասունները սեփականաշնորհելուց հետո, որոշ մարդիկ խաբելով ժողովրդին, նրանց ձեռքից վերցրին հողամասերը եւ անասունները, դարձրին կոլեկտիվ: Այդ կոլեկտիվներից մեկը Արայիկ Ջալինյանի ղեկավարածն է, որն անցյալ տարի բարձր գներով վաճառքի ենթարկեց ամբողջ հարստությունը, այն յուրացրեց միայնակ. վաճառեց բերքը, հորթերը, կաթը, անասնակերը: Տեսնելով, որ թալանում են մեզ, որոշեցինք հետ վերցնել մեզ հասանելիք հողամասերը, անասունները եւ տեխնիկան: Սակայն հողը հետ վերցնելուց մեզ տալիս են անտիտան հողամասերը, պահում են անասունների մի մասը, չհաշված անցյալ տարվա ծնած հորթերը, որոնց ծախել են: Ծախել են նաեւ տեխնիկան, չեն տալիս մեզ հասանելիք անասնակերը, սերմացուն, որ ցանենք: Մեզ լրիվ թալանել են: Այժմ բոլորս կանգնած ենք կոտրած տաշտակի առաջ, ոչ անասնակեր կա, ոչ սերմացու ունենք, ոչ էլ տեխնիկա: Գործկոմի նախագահը չի էլ ուզում ուշադրություն դարձնել, նա այդ ղեկավարների հովանավորողն է: Էլ ում դիմենք: Աղեսյալ գոռու մեջ էինք, եւ ահա կրկնակի աղետ թալանչիների կողմից: Գյուղն անտերացել է, չկա հսկողություն տեղական իշխանությունների վրա, ինչ ուզում անում են:

Ռ. ԱՅՎԱԶՅԱՆ
Ստեփանավանի երջան, գյուղ Ամրակից

Տեսաերիզ ուղարկեք Ստեփանակերտ

Մարտի 15-ի «Լրաբեր» ծրագրում Հայաստանի հեռուստատեսության լրատվական ծառայությունը, տարբեր պատճառաբանություններ բերելով, դժգոհում էր Արցախից կանոնավոր տեղեկատվության պակասից՝ այն դեպքում, երբ Ստեփանակերտի հեռուստատեսության օդերեւոյթը, տեսաերիզ չունենալու պատճառով, ափսոսում էր կիսաս մնացած միակ տեսաերիզը օդերեւութաբանությունով երեւան ուղարկել:

Գոնե տեսաերիզ ուղարկեք Ստեփանակերտ: ■

digitised by A.R.A.R.@

Ի՞նչ է պատահել

Խմբագրությունն այս վերնագրով նամակ է ստացել էկոնոմիկայի նախարարության գործերի կառավարչությունից, ի պատասխան թերթում տպագրված «Էկոնոմետկոմ-էկոնոմիկայի նախարարություն խաղերը, կամ ո՞վ պետք է հատուցի վնասը» հոդվածի: Նամակը տպագրում ենք նույնությամբ, առանց մեկնաբանությունների: Հիշեցնենք, որ վերոհիշյալ հոդվածում շոշափված հարցերի կապակցությամբ ՀՈԱԿ պատգամավորական խումբը մարտի 16-ին հարցադնդում էր արել Հայաստանի կառավարությանը, Ֆինանսների նախարարությանը եւ հանրապետության գլխավոր դատախազին:

«Ազգ» թերթի ս/թ փետրվար 29-ի համարում լույս ընծայված «Էկոնոմետկոմ-էկոնոմիկայի նախարարություն խաղերը, կամ ո՞վ պետք է հատուցի վնասը» հոդվածի կապակցությամբ հարկ ենք համարում հայտնել հետեւյալը.

1. Ամենեւին չի կարելի համաձայնվել հոդվածում արծարծված այն թեզի հետ, թե ՀՀ էկոնոմետկոմի լուծարման ակտը զուրկ է եղել որեւէ իրավական հիմքից: ՀՀ կառուցվածքի մեջ մտնող բոլոր պետական մարմինները (նախարարություններ, պետական վարչություններ, հարկային պետական վարչություն) երբեմն էլ չեն ստեղծվում կամ լուծարվում վերադաս կառավարման պետական մարմնի որոշմամբ: Համաձայն «ՀՀ Գերագույն խորհրդի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 21-րդ ենթակետի, հանրապետության օրենսդիր իշխանության բարձրագույն մարմինը ՀՀ նախագահի առաջարկությամբ հաստատում եւ վերանայում է ՀՀ կառավարության կառուցվածքը: ՀՀ Գերագույն խորհուրդը, իրականացնելով իրեն վերապահված մատնանշված լիազորությունը, 1991 թ. դեկտեմբերի 4-ին ընդունեց ՀՀ օրենքը «ՀՀ կառավարության կազմի եւ կառուցվածքի մասին», համաձայն որի, ի թիվս նախարարությունների, ստեղծվեց ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը: Դրանով իսկ ՀՀ պետական կառավարման մարմինների համակարգից վերացվեցին այնպիսի կառավարման օղակներ, ինչպիսիք էին ՀՀ պետական կոմիտեները, այդ թվում էկոնոմիկայի պետական կոմիտեն, եւ դրա փոխարեն ստեղծվեց կառավարման որակապես այլ մարմին՝ նախարարություն: ՀՀ նախկին արտաքին տնտեսական կապերի նախարարությունը նշված օրենքում ընդհանրապես բացակայում է, կնշանակի՝ լուծարված է: Ուստի իրավական հիմքից զուրկ է հոդվածում կրկնվող այն միտքը, թե իրավաբանական անձ հանդիսացող պետական մարմինը կարող է լուծարվել բացառապես իր վերադասի որոշմամբ, տվյալ դեպքում ՀՀ նախագահի կամ կառավարության որոշմամբ, քանզի կառավարության կառուցվածքը նախարարությունների եւ գերատեսչությունների մակարդակով որոշվում է օրենքով, անմիջականորեն Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից: Ուրեմն, էկոնոմիկայի պետական կոմիտեի լուծարման իրավական հիմքը հանդիսացել է վերը հիշատակված «ՀՀ Կառավարության կազմի եւ կառուցվածքի մասին» ՀՀ օրենքը:

2. Նույն այդ օրենքից բխում է, որ պետական կառավարման համակարգում ստեղծվել է որակապես նոր մարմին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, լուծարված ՀՀ էկոնոմետկոմի փոխարեն: Ավելորդ չէ մատնանշել նաեւ, որ ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 42-րդ հոդվածի համապատասխան, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների լուծարման դեպքում ազատվող աշխատողներին վճարվում է մեկամսյա արձակման նպաստ: ՀՀ նախկին էկոնոմետկոմի աշխատողներն աշխատանքից ազատվել են համաձայն հիշյալ օրենսգրքի 36-րդ հոդվածի առաջին կետի:

3. Հոդվածում նշված է, որ իբր թե նախկին էկոնոմետկոմի աշխատակիցների 90 տոկոսը նույնությամբ ընդունված են ներկայիս էկոնոմիկայի նախարարություն: Նախ, մարտի 4-ի դրությամբ նախկին էկոնոմետկոմի աշխատակիցների միայն 72, իսկ արտաքին տնտեսական կապերի նախարարության աշխատակիցների 12 տոկոսն են ընդունվել աշխատանքի: Ընդ որում, նկատի ունենալով նաեւ մրցույթով ընդունվածներին, նախկին էկոնոմետկոմի եւ արտաքին տնտեսական կապերի նախարարության աշխատակիցների միայն 76 տոկոսն է ընդունվել աշխատանքի: Ընդհանրապես, կարծում ենք հարկ կար անդրադառնալ նախարարության նախաձեռնությանը՝ մրցույթային կարգով աշխատակիցներ ներգրավելուն:

4. Պետության փոխերը «վատնելու» մասին: Նախ, նախկին էկոնոմետկոմի եւ արտաքին տնտեսական կապերի նախարարության աշխատակիցների ընդհանուր թիվը կրճատվել է, ըստ հաստիքացուցակի, 10 տոկոսով: Իսկ եթե նկատի ունենանք ցայժմ բացակայող աշխատատեղերը՝ 27 տոկոսով: Բաժինների թիվը կրճատվել է 14 տոկոսով, նախարարների տեղակալներինը՝ 25, իսկ երկու նախարարներից մնացել է մեկը: Նման կառուցվածքը թույլ է տվել 18 տոկոսով հարաբերականորեն կրճատել (երբ չեզոքացնենք աշխատավարձի ընդհանուր բարձրացումը) բյուջեից կատարվող ծախսումները: Երկրորդ, ՀՀ կառավարության 1991 թ. մայիսի 12-ի թիվ 345, հոկտեմբերի 2-ի թիվ 588 որոշումների համապատասխան, նախարարություններին թույլատրվում է հատատել իրենց կենտրոնական աparատի կառուցվածքը եւ սահմանված աշխատանքի վարձատրման ֆոնդից աշխատողների կրճատման հետեւանքով գոյացված տնտեսումների գումարները ուղղել աշխատողներին հավելավճարներ տալուն:

Աշխատողներին արձակման նպաստը վճարվել է կառավարության կողմից էկոնոմիկայի նախարարությանը սահմանված վարձատրման ֆոնդի երջանակներում: Այս տեսանկյունից բյուջեի միջոցները վատնելու մասին ընդհանրապես խոսք լինել չի կարող:

5. Ֆինանսների նախարարության իրավաբանի «մտքերի» բազմաթիվ վկայակոչումները տարակուսանք են հարուցում: Զգացվում է, որ բարդ է նախկինում ընդունված եւ սերտված իրավական նորմերի հիերարքիան. սեփական կառավարության որոշումները պետք է գոնե կարդալ:

Վերջում հույս ենք հայտնում, որ «Ազգ» թերթը բավականաչափ «դեմոկրատ» կգտնվի մեր պատասխանը տպագրելու հարցում: Ինչի՞ համար էր այդ անհիմն հոդվածը եւ արդյոք դրանում միտում կա՞ր, բողոքում ենք ընթերցողի խղճին:

Գործերի կառավարիչ՝
ԲՈՐԻՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

P.S. Ս/թ մարտի 11-ին անձամբ Հեղ. պ-ն Հ. Ավետիսյան, հանձնեցի հոդվածի պատասխանը, բայց Դուք, չգիտես ինչու, այն հետո համարել եք ոչ պատշաճ եւ ետ եք վերադարձրել. նախարարից պահանջելով հավաստել պատասխանի պատշաճությունը: Իսկ ս/թ մարտի 16-ին մեր կուսակցության անդամ, պատգամավոր Ռ. Պետրոսյանը իրեն իրավունք վերապահեց մեկնաբանություններ անել դեռեւս չբտպագրված պատասխանի կապակցությամբ:

Պարոն Պետրոսյանի մեղադրանքները խորհրդարանում կարելի է միանգամայն զգահաստել որպես աղմուկ բարձրացնելու միտում:

Մենք պատրաստ ենք ցանկացած կարգի ստուգումների, ուսումնասիրությունների եւ կտրամադրենք մեր ձեռքի տակ եղած փաստերը:

Ամերիկյան Օրագիր

Ծանր վիճակ

Մարտի 19-ին, 0:50-ին, Շուշիից «Գրադ» կայանքից 36 արկ է արձակվել Ստեփանակերտի վրա: Նախորդ օրը մայրաքաղաքի վրա արձակվել էր «Գրադ»-ի 118 արկ: Ավերվել են 70 շենքեր: Զոհվածների մասին տվյալները դեռ ճշտվում են: Քաղաքում իրադրությունը ծայրաստիճան է: Ծանր վիճակում են փախստականները: Միայն Շուշիից կան մոտ 3 հազար բռնագաղթվածներ:

Մարտի 18-ին Բաքվի ռադիոյի «Առավոտ» ծրագրով հաղորդել են Ադրբեջանի ազգային բանակի Աղդամի զորամիավորումներից փախած 22 զինվորների ազգանունները, որոնց մեջ կան ռուսներ, ուկրաինացիներ, լեզգիներ, ղրղզներ եւ թաթիներ:

Մարտի 19-ին Ամիրանլար գյուղի կողմից Մարտունի ավանի վրա բաց է թողնվել Տ-12 տիպի 4 արկ, վիրավորվել է 1 բնակիչ: ■

Հերթական հերյուրանք

Ինչպես հաղորդեցին Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերի շտաբում, հուսահատված մարդկանց առանձին խմբեր փորձում են հեռանալ Լեռնային Ղարաբաղի տարածքից, այդ թվում՝ Հադրութի շրջանով շարժվում են դեպի Իրան:

Մինչդեռ, Ադրբեջանի ՆԳՆ-ում հաղորդեցին, որ լույս 18-ի գիշերը հրթռակոծման են ենթարկվել Աղդամը, Ֆիզուլին եւ Շուշին, կան զոհեր եւ վիրավորներ: Նույն աղբյուրի տվյալներով, Թոուզի եւ Քելբաջարի շրջաններում ուղղաթիռները ցած են նետել կամրագույն միջոցներով 12 դարակ: Ներքգործնախարարության աշխատակցի խոսքերով, մասնագետները գտնում են, որ դա բակտերեոլոգիական զենքի տեսակ է: Միջոցների ուսումնասիրությամբ կզբաղվի հատուկ հանձնաժողովը: ■

Քայքայիչ քարոզ

Ինչպես հայտնի դարձավ ռազմական աղբյուրներից, Նախիջեւանի ղեկավարությունը հանձնարարել է Ադրբեջանի ժողովրդական ճակատի Ջուլֆայի եւ Օրդուբադի բաժանմունքներին աշխատանք տանել Նախիջեւանում տեղակայված ԱՊՀ-ի զինված ուժերի ստորաբաժանումներում եւ համոզել զինծառայողներին դասալքել իրենց զորամասերը: Ժողովրդական ճակատը պետք է նաեւ օգնի դասալիքներին մեկնել Նախիջեւանից:

Նույն աղբյուրները հաղորդեցին, որ ադրբեջանցիները համոզում են Նախիջեւան ժամանած զինծառայողների ծնողներին տուն տանել իրենց որդիներին: Ջուլֆայի դեպոյի մեքենավարներին հանձնարարվել է հանրապետությունից դուրս մեկնելու ժամանակ համոզել Ռուսաստանի եւ ԱՊՀ-ի այլ պետությունների բնակչությանը ետ կանչել Նախիջեւանում ծառայող իրենց զավակներին: ■

Ռուս համայնքի դիմումը

Լեռնային Ղարաբաղի երկու հազարանոց ռուսական համայնքը դիմել է Ռուսաստանի ղեկավարությանը խնդրելով պատշաճությամբ շրջանի ռուսալեզու բնակչությանը. ինչպես նաեւ աջակցել ԼՂՀ-ի ժողովրդին միջազգային ճանաչման գործում: Հայտարարության մեջ նշվում է, որ Ղարաբաղում հայերի եւ ադրբեջանցիների հետ միասին զոհվում եւ տառապում է ռուսալեզու բնակչությունը: Մասնավորապես, փետրվարի 19-ին զոհվել է Ստեփանակերտի շտաբոգնության հիվանդանոցի գլխավոր բժշկի տեղակալ Նելլի Մորոզովան: Ստեփանակերտի ուժգին հրետանակոծություններից մեկի ժամանակ ծանր վիրավորվել են զինվորական դատախազ Իգոր Լազարկինը եւ նրա օգնական Ալեքսանդր Վորոնցովը:

«Նույնիսկ այսօր Ղարաբաղում պահպանվել են ռուսական գյուղեր, իսկ Ադրբեջանի իշխանության տակ գտնվող գյուղերում այլեւս չի հնչի ռուսերեն խոսքը», ասվում է փաստաթղթում:

Ռուսական համայնքը հայտարարեց նաեւ, թե ադրբեջանական բանակի կողմից հայերի դեմ սանձազերծված մարտական գործողությունները թույլ չեն տալիս վերսկսել Ռուսական ուղղափառ եկեղեցու գործունեությունը Ղարաբաղում: ■

Այսուհետ դոլլարի կուրսը կսահմանվի Երեւանում

Այսօր 1 դոլլարը՝ 128 ռուբլի

«Ազգ»-ի թղթակցին տված հարցազրույցում նախկին ԽՍՀՄ «Արտաքսթանկի» Հայկական հանրապետական բանկի վարչության նախագահ Սամվել Եզմաչյանը խոսելով վերջին երջանում տեղի ունեցած փոփոխությունների մասին, նշեց, որ «1992 թվականի մարտի 11-ին նախկին ԽՍՀՄ հանրապետությունների «Արտքնտբանկ»-ի կազմակերպությունները, այդ թվում Հայաստանի «Արտաքին տնտեսական գործունեության բանկը մարտի 15-ից լուծարվում են»: Այդ հրամանին անմիջապես արձագանքեց ՀՀ կառավարությունը եւ մարտի 16-ին որոշում ընդունեց «ՀՀ պետական բաժնետիրական առեւտրային ներմուծման-արտահանման բանկ՝ «Հայներարտբանկ»-ի ստեղծման մասին: Այդ որոշման երկրորդ կետում նշվում է, որ մինչեւ նոր բանկի ստեղծումը 1992 թվականի մարտի 15-ից թույլատրվում է նախկին «Արտքնտբանկ»-ի գործունեությունը: «Մինչ այդ, շարունակեց պրն. Եզմաչյանը, հիշեցնեմ, որ նախկին ԽՍՀՄ արտքնտբանկերի շարքում Հայաստանի բանկը միշտ եղել է ունիվերսալ, այսինքն՝ ունեցել ենք եւ ռուբլու, եւ վալյուտայի հաշիվներ: Նոր բանկի ստեղծմանը հրավիրել ենք նաեւ արտաքսահանման մի շարք ֆիրմաների, ինչպես նաեւ ԱՊՀ երկրների մի քանի բանկերի:

Անցած երեք ամիսներին մեր բանկն արդեն անցել էր դոլլարի կուրսի ինքնուրույն հաստատմանը: Այժմ, մտնելով շուկայական հարաբերությունների մեջ, սկսել ենք մրցակցել նաեւ սեւ շուկայի հետ: Դրանից է կախված նաեւ այն, որ մենք 2–3 օրվա ընթացքում մի քանի անգամ փոխում ենք դոլլարի կուրսը: Եւ երբ երբեմն դադարեցնում ենք վաճառքը, պատճառը ոչ միայն արագ փոփոխություններն են լինում, այլեւ մեր աշխատանքներին խանգարող հովհարային անջատումները: Երբ նախկինում մեր աշխատանքը սկսվում էր 8:30-ին, ապա հիմա վերը նշված պատճառով աշխատում ենք 13–14-ից մինչեւ 21-ը, իսկ հաճախորդների սպասարկումը կատարում ենք մինչեւ ժամը 16-ը: Վալյուտայի գնումը կատարում ենք անսահմանափակ քանակությամբ, իսկ վաճառքը՝ սահմանափակ: Տվող դրամի առավելագույն չափը 200 դոլլար է:

Ընդ որում, վաճառվում է այն քաղաքացիներին, որոնք ունեն հրավերի վարչությունից վավերացված անձնագրեր: Սպասարկում ենք եւ անձնական, եւ տուրիստական, եւ գործուղման մեկնողների:

Այնուհետեւ պրն. Եզմաչյանը նշեց, որ այսօր իրենց գնման համար դոլլարի կուրսը մոտավորապես կլինի 128 ռուբլի, իսկ վաճառքի կհասնվի 138 ռուբլի 60 կոպեկով: «Ասեմ նաեւ, ավելացրեց նա, որ սեւ շուկայում այն կհասնի 150 ռուբլու»: ■

Մի՞թե սա Ավարայր չէ

Մեր թերթի թղթակիցը հաղորդում է Բոստոնից

Մարտի 15-ին երեկոյան ժամը 7:00-ին տեղի ունեցավ բոստոնահայության հանդիպումը Արցախի բեմի առաջնորդ արբազան Տեր Պարգեւ Մարտիրոսյանի հետ: Ուորբրաունի ս. Հակոբ եկեղեցու սրահը լեփ-լեցուն էր հայերով:

Արբազանն իր խոսքն սկսեց՝ ներկաներին հաղորդելով Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի օրհնությունն ու արցախահայության բարեմաղթությունները: Ապա անդրադառնալով պատմական անցյալին լուսաբանեց Արցախի խնդրի էությունը:

Արբազանը ներկաների ուշադրությունը հրավիրեց Արցախի իրավիճակի վրա, երբ ստեղծվեց Բաքվի իշխանությանը ենթակա կազմկոմիտեն՝ տխրահռչակ Պոլյանիչկոյի գլխավորությամբ: *«Այդ ժամանակաշրջանը շատ դաժան եղավ Ղարաբաղի համար: Անդադար բանտարկություններ... գրեթե ամեն հանդիպած երիտասարդի բանտարկում էին: Բանտերում նավթ էին սրսկում նրանց երիկամների մեջ»*, ասաց նա:

Այնուհետեւ հիշեցվեց Մարտունաշենի, Գետաշենի եւ 1991 թվի ամռանը կատարված դեպքերի մասին, որոնք կարող էին շարունակվել մինչեւ օրս, եթե չձախողվեր օգոստոսյան ռազմական խռովությունը:

«Ռազմական հեղաշրջման ձախողումից հետո միայն, երբ խորհրդային բանակն սկսեց շեղոք դիրք գրավել, այդ դաժանություններին հայ երիտասարդները ստիպված եղան պատասխանել կրակով, դիմակայել զենքով՝ պաշտպանելու համար սեփական տունը, ընտանիքը, պատիվը, հողն ու իրավունքը: «Կամ պիտի հաղթենք, կամ փառք ու պատվով պիտի նահատակվենք մեր լեռների վրա»: Այս եղավ արցախահայության ոգեղը»:

Արցախի հոգեւոր հովիվն անդրադարձավ վերջերս ազատամարտիկների կողմից Խոջալուի գրավման հետ կապված ամերիկյան մամուլի խեղաթյուրումներին, որոնց դեմ, ի դեպ, ամերիկահայությունը մինչեւ օրս էլ իր բողոքի ձայնն է բարձրացնում գրավոր թե բանավոր, կուսակցությունների, կազմակերպությունների միջոցով թե անհատապես: Նա ներկաներին պատմեց իրողությունը, ներկայացրեց Ղարաբաղի ամբակոծվող մայրաքաղաքը. *«Քաղաքի 80 տոկոսը չկա: Մարդիկ օրագիրներ աղբում են նկուղներում: Ջուր չկա: Քաղաքից դուրս ընդամենը երկու փրկված աղբյուր ունենք: Իսկ 1–2 դույլ խմելու ջուր ունենալու համար երբեմն ստիպված են լինում 3–4 օր հերթ կանգնել: Մեզ համար ամենամտահոգիչն այն է, որ բոլոր հիվանդանոցները ավերված են: Կա համաճարակի վտանգ: Վառելանյութ չլինելու պատճառով հաղթի աղքը չի վառվում: Իսկ օրերը տաքանում են»*:

«Մենք գիտենք, որ հաղթելու ենք, ասաց արբազանը: Մենք ոչ միայն հավատում ենք, այլեւ Արցախում բոլորս վստահ եւ համոզված ենք դրանում»: «...Մենք պահպանում ենք այն իրավունքը, որ տվել է մեզ Աստված, շարունակեց նա: Աստված ստեղծեց մեզ իբրեւ հայ, իբրեւ քրիստոնյա եւ թնակեցրեց մեզ այս հողի վրա, եւ եթե ուզում ենք Աստծո պատգամը կատարել՝ կնշանակի պիտի մնանք հայ, պիտի մնանք քրիստոնյա եւ պաշտենք այն հողի վրա, որ տրված է մեզ ի վերուստ»:

Այս խոսքերից հետո արբազանը զգաստեցնեց անցկացրեց այսօրվա Արցախի եւ Վարդանանց պատերազմների միջեւ. *«70 տարի է մեզ բռնի կերպով ասում են՝ չպիտի հավատաք, չպետք է իմանաք ձեր լեզուն, ձեր պատմությունը, դուք հայ չեք, դուք աղվանցի եք: Վաղն էլ կասեն՝ դուք մարդ չեք: Մենք պայքարում ենք մեր հավատքի եւ մեր հայրենիքի համար: Մի՞թե սա Ավարայր չէ: Իսկ դուք գիտեք, Ավարայրը վերջիվերջո պրակվում է հաղթանակով»*:

Արցախի հոգեւոր առաջնորդի առաքելության նպատակն էր մեր արյունակիցներին: Հանդիպման վերջում ներկաները հանգանակություններ կատարեցին:

ՍԱՐԳԻՍ ԳԱՎԼԱՔՅԱՆ
15 մարտ, 1992, Բոստոն

digitised by A.R.A.R.@

«Ղարաբաղյան թղթապանակը»

թուրքական հեռուստատեսությամբ

թուրք քաղաքագետները գծում են ղարաբաղյան կնճռի իրենց տարբերակը

«Ազգ»ի նախավերջին համարում, անդրադառնալով թուրքական հեռուստատեսությամբ ղարաբաղյան վերջին իրադարձությունների լուսաբանմանը, ընթերցողին տեղեկացրել էինք մարտի 12-ին «Ղարաբաղ» թեմայով անցկացված կլոր սեղանի մասին: Սակայն, մինչ կլոր սեղանը, երկու խոսքով ներկայացնենք մարտի 11-ին երեր արձակված «Ղարաբաղյան թղթապանակ» հաղորդումը, որ կազմակերպվել էր նախկին դեսպաններից Քյամուրան Գյուրունի, նախկինում Թուրքիայի արտգործնախարար, նաեւ պաշտպանության նախարար Հալուք Բայուլքենի, Անկարայի համալսարանի քաղաքական գիտությունների Ֆակուլտետի պրոֆեսորներ Շյուքրյու Գյուլերի եւ Հասան Քոնիի մասնակցությամբ, ուր գլխավոր թեմաներ Խոջալուի շուրջ ծավալվող իրադարձություններն էին: Ղարաբաղյան իրադարձությունների հետ միասին բարձրացվել են նաեւ Մեծ եղեռնի միջազգային ճանաչման, սփյուռքի նշանակության ու Ադրբեջանի հանդեպ նախկին ԽՍՀՄ-ի թուրքալեզու հանրապետությունների դիրքորոշման հարցերը: Կարծում ենք, հաղորդումը Ղարաբաղի հարցում Թուրքիայի դիրքորոշումը պարզաբանելու տեսանկյունից հետաքրքրական է եւ այն ներկայացնում ենք հիմնական գծերով: Հաղորդումը վարում էր պրոֆեսոր Հասան Քոնին:

Հասան Քոնի.- Ավելի քան մեկ շաբաթ է, ինչ մեր հասարակայնության ուշադրությունը Ղարաբաղի խնդրի վրա է, հատկապես՝ տվյալ տարածքում ազերիների դեմ կատարված դաժան կոտորածներից հետո: Դրանով հանդերձ, հարցի պատմությունը, դրա արմատները ու իրավական հիմքերը պատշաճ մակարդակով լուսաբանված չեն: Հատկանշական է, որ Ղարաբաղյան հարցը միջազգայնացվում է, երբ Հայաստանը Սեւծովյան համագործակցության ծրագրին մասնակցելու իրավունք է ձեռք բերում, արտաքին աշխարհ դուրս գալու համար Թուրքիայից Տրապիզոնի նավահանգիստն է պահանջում եւ Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերությունների սկզբնավորման ուղղությամբ հսկայական քայլեր է գործադրում: Ոչ պակաս ուշագրավ է նաեւ այն, որ հողային պահանջները, սկսած 1945-ից, Արեւմուտքի կողմից անընդունելի են համարվում: Այդ նույն սկզբունքով շարժվում է նաեւ ՄԱԿը: Ի դեմ, Արեւմուտքի դիրքորոշումը առնվազն տարօրինակ պետք է համարել, այն առումով, որ երբ նման պահանջով հանդես են գալիս Թուրքիան կամ զարգացող երկրները, աշխարհն իրար է անցնում, չգիտես ինչու հակառակ պարագային պահանջատիրությունը լույսի է մատնվում: Ինչն է ընկած իրադարձությունների հիմքում, գուցե Հայաստանը լաֆոնտենյան առակների այն գորտն է, որ ցանկանում է նմանվել եզան: Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանը կամ սփյուռքը ժամանակ առ ժամանակ, ինչպես դա տեղի էր ունեցել 1918 թվականին, ավելի ընդարձակ տարածքներ ձեռք բերելու համար կոտորածներ է սարքել: Նույն բանը կատարվում է նաեւ այսօր: 1990 թվականներից սկսած Հայաստանը, իր թիկունքում զգալով Արեւմուտքի աջակցությունը, ասպարեզ է իջնում, պատճառ դառնալով նոր անախորժությունների:

Հարգարժան Բայուլքեն, ես ուզում եմ ձեզ հիշեցնել չորս տարբեր պայմանագրերի մասին, որոնցից Բաքուի ու Գյումրիի պայմանագրերը, եթե ներկայումս իրավական հիմքեր չունեն, ապա ինչ կասեք Մոսկվայի ու Ղարսի պայմանագրերի մասին:

Հալուք Բայուլքեն.- Նախկինում կնքված պայմանագրերի մեջ 1920 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագիրը առ այսօր ուժի մեջ է, բայց ինձ հայտնի չէ որեւէ մի պայմանագիր կամ դրա որեւէ հոդված, որ իրավական հիմք տար հայերի պահանջատիրությանը, այդ թվում նաեւ Ղարաբաղի հարցում: Միջազգային իրավունքի տեսակետից Ղարաբաղը ադրբեջանական տարածք է, իսկ ինչ վերաբերում է ինքնավար մարզի կարգավիճակին, ապա դա պայմանավորված է տարածքում հայ բնակչության առկայությամբ: Դրանով հանդերձ, 60-80-ական թվականներին ազերիների թիվը այստեղ զգալիորեն աճել, իսկ հայերինը՝ կրճատվել է:

Հ.Ք.- Հայաստանի արեւելքում 9 միլիոնանոց Ադրբեջանն է, արեւմուտքում 60 միլիոնանոց Թուրքիան, իսկ հարավում 20 միլիոնի հասնող Իրանի ազերիներն են: Եւ հանկարծ հայերը հանդես են գալիս Լեռնային Ղարաբաղի պահանջով, ընդ որում անտեսում են նաեւ միջազգային նորմերը: Որտեղի՞ց նրանց այդ հանդգնությունը: Հիշեցման կարգով նշենք, որ դա նրանց համար նոր երեւույթ չէ: 18 թվին Վիլսոնի սկզբունքների հետ կապված Հայաստանը Թուրքիային հողային պահանջ է ներկայացրել, 1945-ին հավակնել էր տիրանալ Ղարսին ու Արդահանին: Ի հարկե, այստեղ հարց է ծագում, 45-ին Խորհրդային Միությունը, թե՞ Հայաստանն էր հանդես գալիս պահանջատիրությամբ: 1974 թվականի Կիպրոսի իրադարձություններից հետո հայերն այս անգամ հանդես եկան ահաբեկչությամբ, հիմք ունենալով այդ նույն պահանջատիրությունը: Այլ կերպ ասած, Օսմանյան կայսրության ազգային փոքրամասնությունները կամ նրանք, ովքեր իրենց ազգ են համարում, մինչեւ օրս շարունակում են տարբեր բնույթի դժվարություններ հարուցել Թուրքիային: Ինչո՞վ է սա պայմանավորված: Գուցե այն աջակցությա՞մբ, որ սփյուռքը ստանում է Արեւմուտքից:

Շյուքրյու Գյուլեր.- Անկասկած, շուրջ 4 միլիոնանոց Հայաստանի 19-րդ դարից կամ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակներից ժառանգած մեղադրանքներով, այսինքն ֆիդայական շարժումներով, պահանջատիրությամբ հանդես գալն ինքնին ցույց է տալիս, որ նա դրսից է հովանավորվում: Կարծում եմ, հենց այդ հանգամանքն է, որ մեզ մոտ Հայաստանի հետ փոխհարաբերությունների հաստատման գործում տարբեր բնույթի կասկածներ է առաջացնում: ԱՊՀ-ի հանրապետությունների միջեւ խտրականություն չդնելու նպատակով Թուրքիան ճանաչեց նաեւ Հայաստանի անկախությունը: Սակայն Հայ Դատի պատճառով հնարավոր չի լինում զարգացնել Հայաստանի հետ հարաբերությունները: Այնուամենայնիվ, Հայաստանի դեկավարությունը պետք է հասկանա, որ ինչքան էլ արտասահմանից աջակցություն ստանա, խաղաղ գոյակցության համար, բացի Թուրքիայից, այլընտրանք չունեն: Այդ մտքի հետ, կարծում եմ, պիտի համակերպվեն:

Քյամուրան Գյուրունը.- Հայաստանը 18 թվին եւս պահանջեց Ղարաբաղը: Սակայն, հենց Միկոյանը խոշընդոտ հանդիսացավ, որպեսզի տարածքն անցնի հայերի ենթակայության տակ: 1920-ի մայիսի 22-ի զեկուցագրով, որ Միկոյանը ներկայացրեց Կենտկոմին, Ղարաբաղը մնաց Ադրբեջանի կազմում: Ի՞նչն է պատճառը, որ այդ հարցը վերջին օրակարգ մտավ: Նախ, Հայաստանը երբեք չի հրաժարվել այն մտքից, թե Ղարաբաղը իրեն է պատկանում: Այդ առումով, չի բացառվում նաեւ, որ հայերը օրերից մի օր Նախիջեւանը նույնպես պահանջեն, որովհետեւ ռուսները այն Հայաստանին հանձնելու մտադրություն են ունեցել: Երկրորդ պատճառը, կարծում եմ, *«պերեստրոյկան»* է: Ռուսաստանի վերակառուցման հետ միասին Հայաստանում էլ վերակառուցվելու ցանկություն առաջացավ: Հայերը պարզապես փորձեցին օգտագործել Ռուսաստանի փլուզման ընձեռած հնարավորությունները: Իհարկե, հարցադրումը ճիշտ է, թե ինչպես 3.5 միլիոնանոց Հայաստանը պայքարի մեջ է մտնում Ադրբեջանի հետ: Պետք է նշել, որ սա ինքնին չափազանց ցավալի հարց է, որովհետեւ 1988-ից սկսած Ադրբեջանը չի կարողանում Ղարաբաղը պահել իր ենթակայության տակ, իսկել իրադրությունը տվյալ տարածքում: Երբ Ադրբեջանը չի կարողանում իսկել Լեռնային Ղարաբաղի իրադրությունը, ապա ի՞նչ կարող ենք անել մենք:

Հ.Ք.- Թվում է, թե հայերը օգտվում են ԽՍՀՄ-ում առաջացած խառնաշփոթ իրավիճակից: Մի՞թե դա այդպես է: Կամա-ակամա մտածում ես, որ Խորհրդային Միության փլուզումը մեզ համար մի նոր 18 թիվ է պարտադրում: Աբխազիայում տեղի են ունենում մեծ տեղաշարժեր, օրինակ՝ Շոտլանդիան անկախություն է պահանջում: Ուզում եմ ասել, որ 18 թվականի կամ Վիլսոնի պարտադրման պայմաններում Թուրքիան չափազանց զգույշ պետք է լինի: Դրանով հանդերձ, բանականությունը, միջազգային իրավունքն ու պայմանագրերը հաշվի առնելով դժվարանում են որեւէ տրամաբանական բացատրություն տալ Հայաստանի պահանջներին: Մի՞թե միայն Ղարաբաղի կարգավիճակի փոփոխության հարց է, գուցե անհամեմատ դա ավելի ընդգրկուն է:

Հ.Ք.- Հայաստանը միջազգային ասպարեզում իր համար նպաստավոր պայմաններ է ստեղծում եւ իր գործողությունները, որ դրսեւորվում են 1915-ի ցեղասպանության վրեժի տեսքով, կարողանում է արդարացնել, համենայն դեպս Արեւմուտքում մամուլն ազերիների կոտորածներին անդրադառնում է այն տեսանկյունից, թե ժամանակին նրանք հայերին են կոտորել: Ինչո՞վ է պայմանավորված Արեւմուտքի նման դիրքորոշումը, սա մի՞թե երկակի ստանդարտ կիրառում չէ: Տվյալ պարագային ի՞նչ կարող է անել Թուրքիան:

Շ.Գ.- Սա բերեւս ամենաբարդ հարցն է: Կարծում եմ, ԽՍՀՄ-ի փլուզման հետ միասին որպես գերուժ միայնակ հանդես եկող ԱՄՆ-ի վրա դրված հույսերը, թե կկարգավորի բոլոր վիճելի խնդիրները, չարդարացան: Երբ Թուրքիան ցանկանում է հարթել իր համար կարեւոր նշանակություն ունեցող խնդիրները եւ աղահովել շրջանում քաղաքական կայունություն, ապա պիտի առաջնորդվի ոչ թե ներկա իրավիճակում չափազանց վտանգավոր լուծումներ առաջադրող ազգայնական գաղափարներով, այլ այսօր աշխարհում տեղի ունեցող գործընթացներին համադրասխան մեթոդներով: Այսինքն, եկեք ընդունել մարդու իրավունքները, աջակցել նրանց, ովքեր դրա կարիքն ունեն, նպաստելով ժողովրդավարության զարգացմանը մեր սահմաններին հարակից շրջաններում: Ինձ թվում է, այլընտրանք չունենք:

Հ.Ք.- Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունների առթիվ Հայաստանը առաջ է քաշում այն տեսակետը, թե դրանց պատճառը ինքը չէ, այլ գրոհայինները: Վերջին իրադարձությունների ծեր գնահատականը:

Ք.Գ.- Նախ ասեմ, որ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանն ազատ գործելու հնարավորություն ձեռք բերեց: Ինձ թվում է, մենք կարող էինք լավագույն ձեւով օգտագործել Խոջալուի ջարդերը: Ցավոք, դա տեղի չունեցավ: Չէ՞ որ Հայաստանը մշտապես ջարդերից է խոսում: Երբ մեզ հաջողվեր Խոջալուն պատված մակարդակով ներկայացնել աշխարհին, ցույց տալով, թե ահա ձեզ կոտորած, որի մասին հայերը միշտ պնդում են, ապա շատ բան կփոխվեր: Ինչ վերաբերում է Ղարաբաղին, ապա նա առանց Հայաստանի օգնության չի կարող այսքան երկար դիմադրել: Եթե Հայաստանը հրաժարվեր օգնությունից... Իսկ թե լարված հարաբերությունները բոլոր հարեւանների հետ ի՞նչ առավելություններ է տալիս Հայաստանին, դժվարանում եմ պատասխանել:

Հ.Ք.- Ինչպես գիտեք, Չեթինը Ղարաբաղյան կոնֆլիկտի առնչությամբ հանդես եկավ ծրագիր-առաջարկով, եւ այն Հայաստանի կողմից մերժվեց: Թուրքիան այդ առումով միջազգային ո՞ր կազմակերպությունները կարող է օգտագործել:

Հ.Ք.- Անվիճելի է, որ հարցն առաջին հերթին պետք է կարգավորեն Ադրբեջանն ու Հայաստանը, բանակցելով միմյանց հետ: Սակայն կողմերի միջեւ կայացած պայմանավորվածությունները միակողմանիորեն Հայաստանի կողմից խախտվում են: Դրա լավագույն օրինակը փետրվարի 20-ին Հովհաննիսյանի ու Սադիխովի միջեւ ստորագրված մոսկովյան կոմյունիկեն է: Կարծում եմ, Թուրքիան լավագույն ձեւով օգտագործեց ԵԱՀԽ-ն, որեմն, մնում է ՄԱԿ-ը:

Հ.Ք.- Հայաստանն Արեւմուտքից զենք է ստանում: Վերջին իրադարձությունները ցույց են տալիս, որ ազերիները դժվարանում են չեզոքացնել ամենաարդիական զենքերով զինված, Արեւմուտքի աջակցությունը վայելող ոստիկանությունները: Բնականաբար, նրանք օգնության ակնկալիքով իրենց հայացքն ուղղում են դեպի Թուրքիա: Ներկա իրավիճակում, կարծում եմ, Ադրբեջանը ԵԱՀԽ-ի որոշումով զենք չի կարող գնել եւ այդ որոշմանը պարտավոր ենք ենթարկվել նաեւ մենք: Սակայն, թուրքալեզու մյուս հանրապետությունների անտարբերությունը իրադարձությունների հանդեպ առնվազն զարմանալի է: Մի հանգամանք, որ մտածելու տեղիք է տալիս եւ խորապես հուզում մեզ: Համենայն դեպս, շրջանում փորձ է արվում ստեղծել մի նոր Լիբանան կամ Իսրայել: Մենք գիտենք, որ Լիբանանի կամ Իսրայելի պարագային արաբական երկրները համերաշխությամբ արտահայտում են իրենց միասնական վերաբերմունքը: Ինչն է պատճառը, որ թուրքալեզու հանրապետությունները Հայաստանի հանդեպ չեզոք դիրք են գրավում եւ ինչքան էլ տարօրինակ թվա, ամեն ինչ սպասում են Թուրքիայից: Թերեւս, ամենազարմանալին այն է, որ նրանք սպասելիքներ ունենալով հանդերձ, Թուրքիային պարզորոշ հասկացնում են, թե մեծ եղբոր կարիքը չունեն եւ մեզ, ինչպես դա արեց Ադրբեջանի խորհրդարանի նախագահը, ասում են, «մեծ եղբոր դեր մի կատարեք, Թուրքիան ու Ադրբեջանը իրավահավասար պետություններ են»: Բարի, չկատարենք, բայց ո՞վ է ձեզ թիկունք կանգնելու: Գուցե նրանք չեն ուզում նաեւ աջակցություն, գուցե նախընտրելի է, որ Թուրքիան առհասարակ չմիջամտի:

Ո՞րն է ցանկալին, նրա միջամտությո՞ւնը, թե՞ չեզոքությունը: Իսկ ինչո՞ւ են լռում այն պետությունները, որոնք իսլամի դրոշ են ծածանում, չէ՞ որ մահմեդականներ են զոհվում:

Շ.Գ.- Ճիշտ է, որ թուրքալեզու հանրապետությունները անտարբերությամբ են հետեւում իրադարձությունների զարգացմանը Լեռնային Ղարաբաղում: Գուցե այդ հանրապետությունների համար ընդունելի հարցի ԱՊՀ-ի շրջանակներում լուծման ձեւն է, որովհետեւ գիտենք, որ ԱՊՀ-ի կազմավորման ժամանակ համաձայնագիր է ստորագրվել, ըստ որի բացառվում է ուժի գործադրումը: Մինչդեռ Հայաստանը, սանձազերծելով Ղարաբաղյան կոնֆլիկտը, փաստորեն պայքարի է դնում ԱՊՀ-ի առանց այդ էլ խախտուն հիմքերի տակ: Այդ ամենն անհրաժեշտ է տեղեկացնել հասարակությանը, որ Ադրբեջանը մի տեսակ բռնություն, անկարողություն է դրսեւորում: Անշուշտ, դրա համար առկա են մի շարք պատճառներ: Այնուամենայնիվ, Թուրքիայի համար ցանկալի Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանումն ու հանրապետությունում ներքաղաքական իրավիճակի կայունացումն է: Իսկ ինչ վերաբերում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ դիմելու հարցին, չմոռանանք, որ Ադրբեջանը նույնպես ՄԱԿ-ի անդամ է եւ կարող է ինքը դիմել:

Ք.Գ.- Այն հարցին, թե ինչո՞ւ ամեն ինչ ակնկալվում է Թուրքիայից ասեմ, որ այդ պատրանքը մենք ենք ստեղծում մեր մեջ: Իրականում ոչ ոք Թուրքիայից որեւէ բան չի պահանջում: Իհարկե, թուրքալեզու մյուս հանրապետությունները միանգամայն անտարբեր են, նույնիսկ իրադարձություններին վերաբերմունք ցույց տալու ցանկություն չունեն: Ինչքան էլ տարօրինակ թվա, մենք Թուրքիայում դա չենք զգում, բայց փոխարենը Հայաստանը շատ լավ է զգում: Երբ այսօր Ադրբեջանը մեզանից օգնություն չի պահանջում, դա նրա համար է, որ Ղարաբաղի հարցը դիտվում է Ադրբեջանի ներքին գործը: Բացի այդ, մեծ ընդդիմություն կա նաեւ Մուրալիբովի դեմ եւ գլխավոր նպատակը կարծես նրա տապալումն էր: Մի դեպք մտածենք, որ Ալիեւն ու Մուրալիբովը միմյանց գրեթե չէին բարեւում: Նույնը կարելի է ասել Ազգային ճակատի ղեկավար Էլչիբեյի մասին: Այլ կերպ ասած, Ղարաբաղի կոնֆլիկտը Ադրբեջանում դիտվում է Մուրա-

digitised by A.R.A.R.@

լիբովին իշխանությունից հեռացնելու միջոց: Մինչեւ օրս Ադրբեջանը իրադարձություններին լուրջ վերաբերմունք ցույց չի տվել. օրինակ մարդիկ Բաքվում շաբաթներով հանգիստ կարողանում են զբաղվել առօրյա կյանքով: Նման բան Թուրքիայում տեղի չէր ունենա: Երկրորդ հանգամանքը. որ ուզում եմ շեշտել. ԱՊՀ-ի զինված ուժերին մասնակցելուց հրաժարվելու եւ ազգային բանակ ստեղծելու Ադրբեջանի հայտարարությունն է: Դա տեղ իրադրությունը Լեռնային Ղարաբաղում: Ազգային բանակ ունենալու դեպքում հնարավոր կարելի էր դայֆարել հայ զրահայինների դեմ: Նույնիսկ զինակոչ էլ հայտարարվեց. բայց ո՞ւր է այդ բանակը: Ուրեմն. Ադրբեջանի բնակչության մեջ առանձնաղես դայֆարելու ցանկություն չկա: Չգիտես ինչու. մենք Թուրքիայում ազերիներից ավելի ազերական կամ ինչպես ասում են բազավորից ավելի բազավորական ենք հանդես գալիս: Այնուամենայնիվ. դարտավոր ենք մի բան մտածել: Մեր գործունեությամբ Ադրբեջանին օգնո՞ւմ ենք. թե՞ նրան դաստիարակում ենք հրահրում: Կարծում եմ. զենքով օգնելու կարիք չկա: Մեր հասարակայնությունը 1990 թ. հունվարին. երբ խորհրդային զորքերը մուտք գործեցին Բաքու. նորից այն աստիճան էր բորբոքվել. որ նույնիսկ ԽՍՀՄ-ին դաստիարակ հայտարարելու տրամադրություններ էին առաջացել երկրում: Կարծում եմ. կառավարությունը դարտավոր է հրադադարակել իր ձեռքի տակ եղած տվյալները. որպեսզի վերջ գտնեն վերջին երջանում մեր հասարակայնության մեջ բռնկված միանգամայն ավելորդ հուզումները:

Հ.Ք.- Դժվար է ասել. թե թուրքալեզու հանրապետությունները Ղարաբաղի առնչությամբ անտարբեր են. մենք դարգաղես ճշգրիտ տեղեկություններ չունենք ձեռքի տակ: Չի բացառվում նաեւ այն. որ Ադրբեջանը օգնության դիմաց Թուրքիային: Իհարկե. հարցը ներկայացնել այնպես. ինչպես դա արվում է ներկայումս Թուրքիայում թե կոնֆլիկտում ամենաբահագրգիռ կողմը մենք ենք. ճիշտ չի լինի: Ուզում եմ երկու խոսքով անդրադառնալ ՄԱԿ-ի հարցին: Եթե մեզ չհաջողվի հասնել ԵԱՀԽ-ի որոշման կիրառմանը. միաժամանակ շարունակվեն ազերիների ջարդերը. ապա Թուրքիան դեսք է դիմի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին: Այլ հարց է. թե դա ինչ արդյունք կտա: Չի բացառվում. որ Անվտանգության խորհուրդը մեզ համար բոլորովին անցանկալի որոշում կայացնի:

Ք.Գ.- Երբ հաղորդումը իրադարձությունների առնչությամբ հասարակությանը լուսավորելու նպատակ է հետապնդում. ապա մենք դարտավոր ենք բացեիբաց խոսել մի շարք հարցերի մասին: Վերցնենք. օրինակ. բարեմնեական նավթի ու բնական գազի հարցը. որ փոխադրվելու է Թուրքիա: Թուրքմենստանը բացարձակապես դեմ է. որ նավթամուղն ու գազամուղն անցնի Ադրբեջանի տարածքով: Սա թուրքալեզու երկու հանրապետությունների փոխհարաբերությունների չափանիշն է: Իսկ ինչ վերաբերում է մարդկանց սպանություններին. հատկապես երբ սպանվում են մեզ հետ մշակութային սերտ կապեր ունեցողները. բարի եղիր անդայման ընդունել եւ չբարկանալ. որ իրադարձություններին մեր կողմից այսքան ողբերգական բնույթ տալը առաջին հերթին դայմանավորված է հայկական գործոնով: Շուրջ երկու տարի առաջ Ուզբեկստանում թուրք մեսխեթներին երբ անխնա կոտորում էին. Թուրքիայում ոչ ոք նույնիսկ բերանը չբացեց. կատարյալ լռություն էր. իսկ հիմա աղմուկ-աղաղակ ենք բարձրացնում. որովհետեւ կոնֆլիկտի մեջ ընդգրկված են հայերն ու ազերիները: Ի դեպ. ես թուրքալեզու մյուս հանրապետություններին թարական չեմ համարում. որովհետեւ նրանք իրենց որպես այդպիսին չեն ճանաչում. յուրաքանչյուրն իրենց անունն ունեն ուզբեկ. ղազախ եւ այլն: Ասված մի առասցե. իրադրությունը Ղարաբաղում սրվի: Բայց քանի դեռ Հայաստանն ու Ադրբեջանը միմյանց դեմ չեն դաստիարակում. ի՞նչ կարող է անել Թուրքիան: Ինչ է. մե՞նք հայտարարենք դաստիարակ: Չնայած կան մարդիկ. որ դա էլ են ասում: Երբ ինքն Ադրբեջանը չի դաստիարակում Հայաստանի հետ. ապա նրա փոխարեն ես ինչո՞ւ դաստիարակենք:

Ե.Գ.- Ես համամիտ եմ ձեզ հետ: Օրինակ. իմ ուսադրությունը գրավեց վերջերս Բյուլենթ Էջեվիթի կողմից արված առաջարկը: Համաձայն դրա. սահմանների որոշակի փոփոխությամբ. ազգաբնակչության փոխանակման միջոցով հնարավոր է հարցին մնայուն լուծում գտնել: Այնուամենայնիվ. Նախիջեւանի ու Ադրբեջանի միջեւ ընկած տարածքը կարելի է գիջել Ադրբեջանին. փոխարենը Ղարաբաղից մի հատված թողնել Հայաստանին. նրա ու Լեռնային Ղարաբաղի միջեւ գոյացած միջանցքն էլ հետը: Գուցե այս միջոցով հարցը լուծվի: Ի դեպ. լուծման այս եղանակը Թուրքիայի համար էլ բավականին ցանկալի է. քանի որ ուղղակի կաղ կհաստատվի Ադրբեջանի հետ:

Հ.Ք.- Անշուշտ. Հայաստանն ու Ադրբեջանը կարող են կոնֆլիկտին ցանկացած լուծում գտնել. եւ դա Թուրքիայի համար որեւէ բարդություն չի առաջացնի: Սակայն իրադարձությունների ծավալման հնարավորությունը չի բացառվում: Ես հարցին «հազար հոգի սպանվեցին» տեսանկյունից չէ. որ մոտենում եմ. որովհետեւ հայերը անընդհատ խոսանում եւ միշտ խախտում են զինադադարի դայմանները:

Հ.Ք.- Թվում էր, թե ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Թուրքիան ազատ շունչ քաշելու հնարավորություն է ստացել, բայց ոչ: Առաջացան բազմաթիվ հարցեր, որոնց մեջ ամենամտահոգիչը հայկականն է: Ես ցանկանում եմ անդրադառնալ սփյուռքի ու Արեւմուտքի դիրքորոշմանը: Հայտնի է, որ 15-ի ցեղասպանության հարցը դամոկլյան սրի նման կախված է Թուրքիայի գլխին: Դա հատկապես իրեն զգացնել է տալիս ընտրություններ նախօրյակին, իսկ այս տարի ԱՄՆ-ում ընտրություններ են: Նախորդ տարիների փորձը ցույց է տալիս, որ մի քանի հարյուր հազար հայի համար կարողանում են վիրավորել Թուրքիային: Մի՞թե Հայաստանը նրանց համար այդքան կարեւոր է: Չէ՞ որ Հայաստանում նավթ էլ չկա: Ինչն է այս ամենի դաստիարակը:

Հ.Ք.- Կարծում եմ. այստեղ բացի դեսություններից. առկա է նաեւ կազմակերդություններ գործոնը: Համենայն դեպս դաշնակիցների հարցում անհրաժեշտ է շափավոր լինել: Հարցը քրիստոնյաների կամ մահմեդականների հարց չէ: Միայն Թուրքիան չէ. որ դառնում է Արեւմուտքի զոհը:

Ք.Գ.- Կան դեսություններ ու կազմակերդություններ. որոնք ազդեցություն ունեն սփյուռքի վրա: Այսինքն. ոչ թե ինքը սփյուռքն է անցնում գործողությունների. այլ նրան քիկունքից մղում են: Ի դեպ. մինչեւ վերջերս սփյուռքի վրա ամենաբույլ ազդեցությունն ուներ Հայաստանը: Դրանց միջեւ անջրպետ կար. բայց իրադրությունը կտրուկ փոխվեց: Անավասիկ. Հայաստանում արտգործնախարար է նշանակվում ԱՄՆ-ի քաղաքացի Հովհաննիսյանը: Եթե չեմ սխալվում. նա Լոս Անջելեսում առաջնորդել էր հակաթուրքական ցույցը. այրել էր Թուրքիայի դրոշը. իսկ Լիդարիսյանը ձեզ հայտնի Զորյան ինստիտուտի տնօրենն էր: Բացի այդ. Բելգրադում Թուրքիայի դեսպան Բալքարին սպանող երկու ահաբեկիչներ ներկայումս Հայաստանում ազատման են գալիս. իսկ Տեր-Պետրոսյանին. որ Ղարաբաղ կոմիտեի անդամ էր. կարծում եմ ներկայացնելու կարիք չկա:

Ե.Գ.- Արեւմուտքի կողմից հայկական գործոնի օգտագործումը. կարծում եմ. նոր երեւույթ չէ: Այն Օսմանյան կայսրության դեմ է օգտագործվել: Այսօր էլ նրա փլատակների վրա առաջացած Թուրքիայի Հանրապետության դեմ է օգտագործվում: Ներկայումս Հայաստանը ձեռք է բերում քաղաքական այն երջանակների ու դեսությունների աջակցությունը. որոնք մինչ այդ հովանավորում էին սփյուռքին:

Պատրաստեց ՀԱԿՈԲ ՉԱԲՐՅԱՆԸ

Երրորդության արդյունավետության օրենքը

Ինչպես 1918 թ. Ռուսական միապետության կազմալուծումը, այնպես էլ խորհրդային կայսրության փլուզման գլխապտույտ ընթացքը կընկնի ծնեց Հայաստանի դեպեսականությունը: Այդ ծնունդն օրախնդիր դարձրեց դեպեական քաղաքականության սեփական, ազգային տեսական հիմքի կամ գոնե դրա մտահղացային հիմնավորման անհրաժեշտությունը: Այսպիսի խիստ հարցադրումը թելադրված է բոլշեւիկ-դանքուրքական դավի հետեւանքով, կենսագործունեության աղբյուրներից եւ դայմաններից զրկված, ազգային այս փոքր հողակտորի սահմաններում հայ ժողովրդի գոյությանն սպառնացող վտանգով:

Առնվազն սխալ են այն մոդումները. թե մյուս դեսությունները գոյատեւում են հենց այնպես, առանց իմանալու, որ այդ գոյության համար անհրաժեշտ է ունենալ ինչ-որ տեսություն: Հայաստանի յուրահատուկ աշխարհաքաղաքական դայմաններում դարտադիր թելադրանք է մաս առ մաս, փշրանք առ փշրանք այդ դայմաններից իսկ քխող եւ դրանց համադատասխան ազգային դեսական քաղաքական դորոցի ստեղծումը:

Ընթերցողներին եւ նրանց, ում հետաքրքրում են հայ քաղաքական մտքի հիմունքները, ներկայացվում է միջդեսական քաղաքական հարաբերությունների մի օրենք, որը հեղինակն անվանել է երրորդության արդյունավետության օրենք (ԵԱՕ):

ԵԱՕ-ն բացահայտում է դեսության քաղաքական անվտանգության ինքնակարգավորվող համակարգի մեխանիզմի մի գործողություն, որն ադահովում է թույլ երկրի տեւական գոյությունը մի քանի ուժեղ դեսությունների միջեւ:

Ըստ իրադրության, այդդիսի դեսություններ հաճախ եւ սովորաբար լինում են չորսը կամ հինգը: Սակայն սկզբունքն անվանվում է երրորդության ըստ դեսությունների նվազագույն քանակի՝ թույլ կողմ, միջակ կողմ եւ ուժեղ (գերհզոր) կողմ:

Օրենքի էությունը բխում է երկու դայմանից: Առաջինը դահանջում է հետեւյալ հարցի դատասխանը. ուժի տեսակետից միջին եւ գերհզոր դեսություններից որի՞ն է նդատակահարմար դաշնակցել, որդեսզի հնարավոր լինի գոյություն դահդանել: Երկրորդ դայմանը դահանջում է կողմնորոշվելու հնարավորության անընդհատություն, քանի որ ազգի կենսունակությունը ոչ թե ժամանակավոր, այլ անընդհատ հասկացողություն է:

Վերջինս բացատրվում է թույլի կողմնորոշման փոփոխության անհրաժեշտությամբ, հաշվի առնելով, որ քաղաքական գործընթացներին, բնորոշ են ժամանակի ընթացքում ուժերի հարաբերակցությունները շարժուն կերդով փոփոխել:

Օրենքն ինքնին շարադրված է գծային կախվածությամբ, չնայած կյանքն ու դատմությունն ընթանում են բարդ, երբեմն հակասական ենթակայություններով, դատճառահետեւանքային կապով:

Վերջադես, այն հատատությունները, որոնք դրված են խնդիրների լուծման հիմքում, բոլորովին էլ հատատուն չեն եւ ունեն միջին հավասարակշռող կետից տատանվելու հատկություն:

Այս օրենքը փորձում է քաղաքականության բնագավառում որակական արժեքներին տալ քանակական նշանակություն:

Այսդիսով, ԵԱՕ-ն թույլ կողմի համար որդես անհրաժեշտություն է ներկայացնում ոչ թե ուժեղ, այլ միջակ կողմի ընտրությունը: Միջակի հետ դաշինքը (կարելի է օգտագործել ոչ թե դաշինք, այլ համագործակցություն եզրը՝ վերջինս ավելի ճկուն է) ավելի է հակված փոխադարձ ձեռնտու քայլերի, քան ուժեղի հետաքրքրությունը թույլի նկատմամբ, որը հաճախ արտահայտվում է հենց թույլ կողմին սեփական շահերին ծառայեցնելու մեջ: Ուժեղի կողմից թույլին իր կողմը գրավելու դատճառները չնչին են: Ուժեղ (կամ էլ հարուստ) կողմը դարտադիր չէ եւ շահագրգռված էլ չէ մտածել, հոգալ թույլի գոյության մասին: Ուժեղի եւ թույլի դաշինքը զուրկ է փոխադարձ նդատակահարմարությունից, հավասարությունից, երաշխիքներից: Այն փոքրի համար է լեցուն վտանգներով, քանզի ուժեղը ցանկացած դահի կարող է նրան «մանրադրանի» տեղ օգտագործել. նրա կորուստը համարելով (իր հնարավորությունների հետ համեմատած) չնչին «զոհ»:

Ուժեղի տեւական տիրադետությանը հնարավոր սդառնալիք է միջակի գոյությունը, ոչ թե փոքրի: Միջակն սդառնում է հասնել ուժեղի հզորությանը, նրան հասանելի է մեծի տիրադետությունը կիսելու հնարավորությունը: Այդ իսկ դատճառով ուժեղ կողմը համադատասխանաբար կձգտի իր ազդեցության տակ դահել կամ հսկել միջակին: Սակայն միջակը գոյության դայքարում ձգտում է առաջ, ոչ թե ետ: Եւ առաջ՝ նշանակում է գրավել ուժեղի տեղը: Այս ձգտումը ստիպում է միջակին իր ուժի դակասը լրացնելու միջոցներ փնտրել: Եւ ահա, թույլի հետ դաշինքը ընձեռում է դրա հնարավորությունը: Այդ փուլում թույլի գոյության փաստն ինքնին ակտիվության եւ նախաձեռնողական հնարավորության երեւույթ է ստանում, ինչը դայքարի ընթացքում արդեն իր դեր չի խաղում: Այդդիսով, փնտրում են թույլին, գնում են դեդի թույլը. սա համընկնում է թույլի նույնատիդ ձգտմանը:

Եւ այսդես, երկու կողմերն էլ շահում են. ուժեղի հետ հակամարտությունում միջակն ուժեղացավ, իսկ թույլն ստացավ սեփական կենսադահովման համար շոշափելի երաշխիքներ: Եթե այդդիսի միությունը միջակին չի բարձրացնում ուժեղից վեր, ապա թույլը շարունակում է իր կենսադահովման քաղաքականությունը՝ նրա հետ համագործակցելով: Իսկ եթե միջակը զարգացման ընթացքում այնքան է հզորանում, որ բոլորից առաջ է անցնում եւ դառնում է ամենաուժեղը, ապա թույլը ետ է քաշվում միջակից եւ նոր դաշինք է կնքում նոր միջակի հետ (հնարավոր է, նախկին ուժեղի):

Այսդիսով, միակախյալ եւ փոխկադակցված գործնական քաղաքական համակարգում, փոխելով հենման եւ դիրքորոշման կետերը, ստանում ենք թույլ կողմի կենսունակության համար ինքնակառավարվող մի երեւույթ, որը գործում է անվերջ ու հարատեւ:

ԵԱՕ-ն համընդհանուր է: Այն արդար է ոչ միայն դեսությունների քաղաքականության, այլեւ մյուս բոլոր տդիալ-քաղաքական միավորների համար:

Քննարկենք այդ օրենքի առանձին հանդիպող դեմքերը եւ դատասխանենք հանրապետության այսօրվա քաղաքական կողմնորոշման հարցին՝ օգտագործելով այդ օրենքը:

1918 թ. Հայաստանի գոյությունը դահդանելու համար առավել նդատակահարմար էր դաշինքը Ռուսաստանի, ոչ թե աշխարհում հզորագույն Անտանտի հետ: (Ռուսաստանի հետ դաշինքը փլուզվեց ոչ Հայաստանի մեղքով, այլ բխում էր համաշխարհային ուժերի գործողություններից): Այն ժամանակ գոյությունը դահդանեց Թուրքիան, որը, Ռուսաստանի հետ դաշնակցած, ջարդեց Անտանտի առաջնակարգ ուժերին:

80-ական թվականներին Գերմանիայի ներքին քաղաքական ուժերի հարաբերակցության մեջ ազատ ժողովրդավարների առաջնորդ Գենշերը դարտությունից փրկեց իր կուսակցությունը՝ հեռանալով ուժեղ եւ գաղափարակից տդիալ-ժողովրդավարական կուսակցությունից եւ իրենից շատ ավելի տարբերվող ՔԺՄ կուսակցության հետ դաշնակցելով:

ԽՍՀՄ-ում վերջին փոփոխությունների լույսի տակ, երբ Ռուսաստանը հայտնվեց զարգացող երկրների շարքում եւ տնտեսական հզորությամբ գլորվեց աշխարհում 8-9-րդ տեղը. նորից առաջացավ Հայաստանի կողմնորոշման հարցը քաղաքական կրքերի հորձանուտում:

Կենսունակության հայկական քաղաքականության գերակայության համար աշխարհը երկբեւեռ է: Դա Ամերիկայի բեւեռն է իր առավել մերձավոր դաշնակիցների (Անգլիա, Իսրայել, Թուրքիա) հետ մի կողմից եւ «միջակացված» Ռուսաստանը՝ մյուս: Հայաստանի ընտրությունը վերջիվերջո կայանալու է այս հանգույցի շրջանակներում:

Այսօրվա նոր քաղաքականագետները հայ ժողովրդին առաջարկեցին վերակողմնորոշում դեպի թուրքական քաղաքական արժեքները:

Սակայն Թուրքիան երկբեւեռ դատմավարական գիծ է տանում: Առաջինը՝ էլ ավելի սերտ քաղաքական դաշինք եւ էլ ավելի մտերիմ հարաբերություններ Ամերիկայի հետ: Երկրորդն ուղղված է սեփական կայսրության՝ Մեծ Թուրանի ստեղծմանը. միաժամանակ Սեւծովյան տարածաշրջանում իր առեւտրական շուկան հիմնելով:

Թուրքիայի ամենասերտ (իսկ վերջին ժամանակներս էլ ավելի ամուր) կապը «տիրոջ» հետ բնականաբար մեզ կստիպի մոտենալ հենց իրեն՝ դեդ. լուծման այս եղանակը Թուրքիայի համար էլ բավականին ցանկալի է. քանի որ ուղղակի կաղ կհաստատվի Ադրբեջանի հետ:

Հ.Ք.- Անշուշտ. Հայաստանն ու Ադրբեջանը կարող են կոնֆլիկտին ցանկացած լուծում գտնել. եւ դա Թուրքիայի համար որեւէ բարդություն չի առաջացնի: Սակայն իրադարձությունների ծավալման հնարավորությունը չի բացառվում: Ես հարցին «հազար հոգի սպանվեցին» տեսանկյունից չէ. որ մոտենում եմ. որովհետեւ հայերը անընդհատ խոսանում եւ միշտ խախտում են զինադադարի դայմանները:

Հ.Ք.- Թվում էր, թե ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Թուրքիան ազատ շունչ քաշելու հնարավորություն է ստացել, բայց ոչ: Առաջացան բազմաթիվ հարցեր, որոնց մեջ ամենամտահոգիչը հայկականն է: Ես ցանկանում եմ անդրադառնալ սփյուռքի ու Արեւմուտքի դիրքորոշմանը: Հայտնի է, որ 15-ի ցեղասպանության հարցը դամոկլյան սրի նման կախված է Թուրքիայի գլխին: Դա հատկապես իրեն զգացնել է տալիս ընտրություն-

ներ նախօրյակին, իսկ այս տարի ԱՄՆ-ում ընտրություններ են: Նախորդ տարիների փորձը ցույց է տալիս, որ մի քանի հարյուր հազար հայի համար կարողանում են վիրավորել Թուրքիային: Մի՞թե Հայաստանը նրանց համար այդքան կարեւոր է: Չէ՞ որ Հայաստանում նավթ էլ չկա: Ինչն է այս ամենի դաստիարակը:

Հ.Ք.- Կարծում եմ. այստեղ բացի դեսություններից. առկա է նաեւ կազմակերդություններ գործոնը: Համենայն դեպս դաշնակիցների հարցում անհրաժեշտ է շափավոր լինել: Հարցը քրիստոնյաների կամ մահմեդականների հարց չէ: Միայն Թուրքիան չէ. որ դառնում է Արեւմուտքի զոհը:

Ք.Գ.- Կան դեսություններ ու կազմակերդություններ. որոնք ազդեցություն ունեն սփյուռքի վրա: Այսինքն. ոչ թե ինքը սփյուռքն է անցնում գործողությունների. այլ նրան քիկունքից մղում են: Ի դեպ. մինչեւ վերջերս սփյուռքի վրա ամենաբույլ ազդեցությունն ուներ Հայաստանը: Դրանց միջեւ անջրպետ կար. բայց իրադրությունը կտրուկ փոխվեց: Անավասիկ. Հայաստանում արտգործնախարար է նշանակվում ԱՄՆ-ի քաղաքացի Հովհաննիսյանը: Եթե չեմ սխալվում. նա Լոս Անջելեսում առաջնորդել էր հակաթուրքական ցույցը. այրել էր Թուրքիայի դրոշը. իսկ Լիդարիսյանը ձեզ հայտնի Զորյան ինստիտուտի տնօրենն էր: Բացի այդ. Բելգրադում Թուրքիայի դեսպան Բալքարին սպանող երկու ահաբեկիչներ ներկայումս Հայաստանում ազատ ման են գալիս. իսկ Տեր-Պետրոսյանին. որ Ղարաբաղ կոմիտեի անդամ էր. կարծում եմ ներկայացնելու կարիք չկա:

Ե.Գ.- Արեւմուտքի կողմից հայկական գործոնի օգտագործումը. կարծում եմ. նոր երեւույթ չէ: Այն Օսմանյան կայսրության դեմ է օգտագործվել: Այսօր էլ նրա փլատակների վրա առաջացած Թուրքիայի Հանրապետության դեմ է օգտագործվում: Ներկայումս Հայաստանը ձեռք է բերում քաղաքական այն երջանակների ու դեսությունների աջակցությունը. որոնք մինչ այդ հովանավորում էին սփյուռքին:

Պատրաստեց ՀԱԿՈԲ ՉԱԲՐՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Հակառակ իսլամի ավանդույթներին

Պարսից ծոցի պատերազմը եւ դրան հետեւած իրադարձությունները ազդեցին իսլամական աշխարհի ավանդույթների եւ կարգերի վրա: Դեռեւս վերջերս անհեթեթ կրվար զինված ուժերում կանանց ծառայելու մասին խոսակցությունն անգամ: Այժմ դա դարձել է փաստ այնպիսի ուղղափառ մուսուլմանական երկրում, ինչպիսին Արաբական Միացյալ Էմիրություններն են:

Ամերիկյան «Ուոլ-Սթրիթ Ջըռնըլ» թերթը տպագրել է մի հոդված, որը պատմում է իսլամական այդ պետության մեջ ԱՄՆ բանակի օգնությամբ կանանց զինվորական ծառայության պատրաստելու մասին:

նից կրակած չկան»: Սակայն 5 ամիս հետո, ավարտելով ուսումնարանը, արաբ կանայք տիրապետում էին մարտական հրացաններին, ռուսական հրթիռային ականանետներին, ձեռքի նռնակներին եւ ատրճանակներին:

Արաբական բերակղզու իսլամական երկրների համար զինվոր կնոջ գաղափարն ինքը ճշմարտանման չի թվում: ԱՄԷ-ին հարեւան Սաուդյան Արաբիայում մինչեւ օրս կանանց չի թույլատրվում մեքենա վարել կամ էլ փողոց դուրս գալ առանց ամուսնու կամ եղբոր ուղեկցության: Նույնիսկ այստեղ, ավելի լիբերալ Արաբական Միացյալ Էմիրություններում, կանայք սկսել են աշխատել բոլորովին վերջերս: Ոչ ոք չէր պատկերացնում, որ նրանք դեռեւս այս հարյուրամյակում բանակ կգնան:

Բանակում ծառայելու արտավն սկսեց էմիրությունների առաջին տիկինը ԱՄԷ-ի նախագահ շեյխ Զահիդ Բեն Սուլթան ալ-Նահայանի ավագ կին Ֆաթիման: Նա երեսը ծածկող ավանդական չադրա է կրում եւ երբեք չի լուսանկարվում: Միաժամանակ Ֆաթիման գլխավորում է տեղի Կանանց միությունը եւ պատասխանատու է նրանց շահերը: Ըստ նրա, Իրանի կողմից Քուվեյթի գավթումը ցույց տվեց, որ Պարսից ծոցի երկրների բանակներում պետք է ծառայեն առավել-ոչ այդ պետությունների հպատակներ:

«Մենք ցանկանում էինք բանակում օտարերկրացիների թիվը հնացնել նվազագույնի: Սակայն, հաշվի առնելով հիմնական բնակչության փոքրաթիվությունը (այն կա միլիոնից էլ ոչ է), *դրան հասնել առանց տեղի տիկինների մասնակցության, անհնար է»,* ասում է ռազմական իգական ուսումնարանի պետ, փոխգնդապետ Մուհամեդ Նասերը:

Իսկ ովքե՞ր պիտի նրանց ուսուցանեին: Էմիրություններում որակյալ հրահանգիչները տղամարդիկ են եւ ուսուցման մեջ նրանց ներգրավելու մասին մտածելն անգամ անկարելի էր:

Էմիրությունները օգնություն խնդրեցին ԱՄՆ-ից: Այդ խնդրանքին արձագանքեց Ֆորտ-Բրագի ակադեմիան ԱՄԷ ուղարկելով ամբողջովին կանանցից կազմված հրահանգիչների մի խումբ: Նախքան նորակոչիկների հետ հանդիպելը, ամերիկյան հրահանգիչները երկրական օր աղրեցին տեղացիների ընտանիքներում, պատկերացում կազմելու համար երկրի մշակույթի եւ բարքերի մասին:

Միեւնույն ժամանակ էմիրությունների 50 հազարանոց բանակը կին զինակոչիկներ է փնտրում: Կամավոր գրվեցին մոտ 1200 հոգի: Նորակոչիկներ էր ընտրում կանանց շարժման ակտիվիստուհի, քինարարիմներ Հեսսա ալ-Հալիդին: Նա հանձնի էր առնում կրթության մասկարդակը, ֆիզիկական վիճակը եւ այն շարժառիթները, որոնք մղել են անցնելու զինվորական ծառայության: Հալիդին հանդիպեց նաեւ դպահոյանողական ուղղության մուսուլմանների հետ՝ ձգտելով ցրել սրանց երկյուղները: Որոնս փաստարկ, նա հիշեցնում էր, թե իսլամի պատմության մեջ է մտել ռազմիկ մի կին Մուհամեդ մարգարեի կողքին մարտնչող Հավի Բինտ ալ-Ազվար: Ռազմական իգական ուսումնարանն անվանվեց նրա անունով:

Ամերիկացի եւ արաբ կանայք աղրում են ռազմական բազայում, սակայն տարբեր զորանոցներում: Ասիճանաբար նրանք մեկը մյուսից սովորում են: Ամերիկուհիները ըստ ժամանակ են վատնում ռազմական կարգապահության իմաստը բացատրելու վրա: Իսկ նորակոչիկները ամերիկուհիներին սովորեցնում են ղեկավարման տեղական մեթոդները: Թե չէ սերժանտները, իրենց բարձր գոռգոռոցներով սիրելով արաբուհիներին շարք կանգնել կամ էլ ուղղվել դեպի զորանոց, դարգարեց նրանց մահու ասիճան վախեցնում են:

«Մի քանի ամիս հետո նկատեցինք, որ կերպարանափոխություն էր կատարվել, ասում է մայոր Կարմինսկին: *Վերջին շաբաթների ընթացքում այդ կանայք անճանաչելի էին դարձել: Նրանց մեջքը ուղղվել էր, գլուխները բարձրացել: Այդ ժամանակ, ավելացնում է նա, նրանք գիտակցեցին, որ կարող են անել այն ամենը, ինչ իրենցից պահանջվում է»:*

Առավել ունակություններ ցուցաբերած սովորողները սպայական ծառայության համար կմնան բրիտանական Սանդհերսի ռազմական ակադեմիա: Մնացյալներն ուսանելու են այնպիսի մասնագիտություններ, ինչպիսիք են տիրող դինամիկային պատկանող կանանց պատասխանությունը, ռազմական հետախուզության մեջ աշխատելը: Ամերիկյան իրենց գործընկերների նման, Էմիրությունների կանայք պետք է զբաղեցնեն մասնագետների պաշտոններ, ոչ թե ծառայեն զինվորական մասերում:

■

ԲԱՐԵՓՈԽՈՒՄ ՅՈՒՆԵՍԿՕ-ՈՒՄ

Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր կազմակերպություններից մեկը ՅՈՒՆԵՍԿՕ-ն, ժամանակի պահանջներին համապատասխան բարեփոխումների ընթացքում է առկա: Կազմակերպությունն անընդհատ փոխում է արտահայտչաձեւը իր գործունեության ավանդական բնագավառներում՝ կրթության, գիտության, մշակույթի եւ տեղեկատվության: Դրանց ավելանում է եւս մեկ ուղղություն՝ շրջակա միջավայրը: Շարունակելով նշանակալի օգնություն ցույց տալ «երրորդ կարգի» երկրներին, այն ձգտում է գործել բոլոր տարածաշրջանների շահերից ելնելով:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն, որի կազմում այսօր կան 162 անդամ երկրներ, անցած տարի նշեց իր գործունեության 45-ամյակը:

Մի շարք կարեւորագույն որոշումներ ուղղված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի արդյունավետության բարձրացմանը: Կանոնադրությունում արված փոփոխության համաձայն, կազմակերպության հիմնական մեխանիզմի Գործադիր խորհրդի անդամներն այսուհետեւ ընտրվելու են ոչ թե անհատական ցուցանիշներով, այլ որպես անդամ երկրների ներկայացուցիչներ: Դրանից բացի, Գործադիր խորհրդի նստաշրջանների միջեւ ընկած ժամանակահատվածում քարտուղարության գործունեության հսկողության համար ստեղծվել է Ֆինանսա-վարչական խումբ: Վերջապես, որոշվեց կազմավորել «բանական Ֆորում», որի կազմում ընդգրկվել են քաղաքական, գիտության եւ մշակույթի ականավոր գործիչներ: Այն պետք է լինի մտահղացումների գեներատոր ՅՈՒՆԵՍԿՕ-ի համար:

Ըստ որում, կազմակերպության անդամ երկրները մտադիր են ավելի ակտիվ մասնակցել նրա քաղաքականության ձեւավորման գործին եւ փոխարինել քարտուղարության դերը, որը մինչ այժմ ինքն էր կազմում նրա գործունեության ծրագիրը: Իսկ ինչ վերաբերում է ասելիք դարձած ՅՈՒՆԵՍԿՕ-ի անարդյունավետությանը, նշվեց Գլխավոր համաժողովում, արդա այն առաջին հերթին անդամ երկրների անարդյունավետ մասնակցության հետեւանք է:

Այսուհետեւ ՅՈՒՆԵՍԿՕ-ն, գրում է «Նոյե Ցյուրիխեր ցայթունգ» թերթը, սկսում է լուրջ բարեփոխումներ: Բայց շատ դժվարությունների հարթիով, իսկապես բարեփոխել ՅՈՒՆԵՍԿՕ-ն, նրանից ավելի շատ իրական «արդյունք» ստանալ կարելի է միայն Միացյալ Նահանգների եւ Անգլիայի մասնակցությամբ, ըստ որում, ակնկալվում է ոչ այնքան բանական մասնակցություն, որքան ֆինանսական: Պետք է պարզ ասել, որ առանց ամերիկյան անդամավճարի կազմակերպության բյուջեն, որը վերջին երկու տարիներին իր գոյության ընթացքում առաջին անգամ կկրճատվի, չի կարող լուծել իր խնդիրները եւ չի կարող ճգնաժամից դուրս գալ: Առավել եւս, որ նախկին գլխավոր վճարողը նախկին ԽՍՀՄ-ը, մինչեւ այժմ չի մարել իր պարտքը եւ հայտնի էլ չէ, թե երբ այդ կանի: Այդ պատճառով անդամ երկրներն ավելի ակտիվ են կոչ անում ԱՄՆ-ին վերադառնալ: Այդպիսի կոչով Վաշինգտոնին են դիմել Ֆրանսիան, Ճապոնիան եւ Իտալիան: Գլխավոր տնօրեն Ֆեդերիկո Մայորը, իր հերթին, բազմաթիվ անգամներ նշել է, թե վերացված են այն պատճառները, որոնք ԱՄՆ-ին ստիպեցին յոթ տարի առաջ դուրս գալ կազմակերպությունից:

Սակայն ամերիկացիները չեն շտապում ուզում են տեսնել, թե ինչպես կդրսեւորվեն հայտարարված բարեփոխումները կյանքում: Դա հետ մեկտեղ նրանք մասնակցում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի այն ծրագրերին, որոնք իրենց համար առավել հետաքրքիր են, համապատասխանում են իրենց շահերին:

Առայժմ ՅՈՒՆԵՍԿՕ-ն, որն առաջ կենտրոնացրել էր իր գործունեությունը «երրորդ երկրներում», սկսում է ավելի ու ավելի զբաղվել բոլոր տարածաշրջաններով եւ հատկապես Արեւելյան Եւրոպայով, առաջին հերթին ժողովրդավարության զարգացման հարցերով: ՅՈՒՆԵՍԿՕ-ն մշակել է մի շարք ծրագրեր, որոնք կարելի է անվանել «ժողովրդավարության դպրոց»: Կազմավորվել է Արեւելյան Եւրոպայում ժողովրդավարական գործընթացների եւ կառուցվածքների հովանավորման միջազգային խումբ: Նորից կազմակերպության ծրագրում ընդգրկվել է սլավոնական մշակույթների ուսումնասիրության նախագիծ: Վերջապես, «ՅՈՒՆԵՍԿՕ-Չերնոբիլ» ծրագրի շրջանակներում հավաքվել է 2 միլիոն դոլար:

Նախկին ԽՍՀՄ-ի անկախ պետություններն ակտիվորեն ընդգրկվում են ՍԱԿ-ի կառուցվածքներում եւ մասնագիտացված հիմնարկներում, մասնավորապես ՅՈՒՆԵՍԿՕ-ում: Նրանցից շատերում ստեղծվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով հանձնաժողովներ: Նրանք ցանկանում են ուղղակիորեն զարգացնել կապերը այդ կազմակերպության հետ: ■

ԴԱՐՁՅԱԼ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄ...

Հողի սեփականաշնորհումը հիմնականում ավարտվել է: Ցանկալի էր զբաղեցնելությունների սեփականաշնորհումը եւ աղաղեսականացումն սկսել միայն համապատասխան օրենքը ընդունելուց հետո, սակայն այն արդեն սկսվել է, թափ է առել աճուրդային վաճառքը: Դրա հետեւանքով ընդունվելիք օրենքի վերաբերյալ առաջացել են տարբեր մոտեցումներ, հաճախ իրարամերժ եւ հակասական: Դրանցից մեկն առաջարկում է բոլոր ձեռնարկությունները պետական անվանելով ու ժողովրդից մեկուսացնելով՝ աճուրդով վաճառել, իսկ մյուսը դրանք համաժողովրդական անվանելով ու պետությունից մեկուսացնելով՝ փոխարկասոնների միջոցով քաղաքացիներին հավասարաչափ, անհատույց սեփականաշնորհել, որը պետք է աղահովի բնակչության շուկայական հարաբերությունների անցման մոտավորապես հավասար մեկնարկային պայմաններ: Առաջինի կողմնակիցները ձգտում են սկզբում պաշտպանել պետության, արտադրության զարգացման ու կուտակված դրամական միջոցներ ունեցողների, նոր միայն սոցիալական արդարությունն ու քաղաքացիների շահերը, իսկ երկրորդի կողմնակիցները, ելնելով քաղաքացիների մեծամասնության ներկա շատ ծանր տնտեսական պայմաններից եւ ի նկատի ունենալով հասունացող սոցիալական պայթյունը, ձգտում են սկզբում պաշտպանել սոցիալական արդարությունն ու քաղաքացիների, նոր միայն արտադրության զարգացման ու պետության շահերը:

Սրանից կարելի է անել մի քանի հետեւություն: Ճիշտ կողմնորոշվելու եւ հասունացող սոցիալական պայթյունը կանխելու նպատակով, ձեռնարկությունների սեփականաշնորհման ու աղաղեսականացման օրենքի պետք է ընդունվի այն քաղաքացիների շրջանում լայնորեն լուսաբանելուց ու քննարկելուց հետո միայն: Հավանաբար, պետական սեփականություն ասելով պետք է հասկանալ համաժողովրդական սեփականություն, որը տվյալ ժամանակահատվածում դրված է պետության տնօրինության տակ, ի շահ ժողովրդի: Իսկ ձեռնարկությունների սեփականաշնորհման ու աղաղեսականացման հիմնական նպատակը պետք է լինի ժողովրդավարական կողմնորոշում ունեցող շուկայական հարաբերություններին անցումը, այսինքն արտադրության զարգացումն ու պետության հզորացումը, դրանում ընդգրկելով բոլոր քաղաքացիների (ձգտելով աղահովել նաեւ նրանց սոցիալական պաշտպանվածությունն ու ստեղծել հնարավորին չափ հավասար մեկնարկային պայմաններ) եւ հանրապետության բնակչության, ինչպես նաեւ շահագրգռված օտարերկրացիների ազատ միջոցները:

Սկզբնապես է, որ կան ձեռնարկություններ, որոնք դեռ շատ երկար ժամանակ, գուցե նաեւ ընդհանրապես չպետք է սեփականաշնորհվեն կամ աղաղեսականացվեն: Կան նաեւ տարբեր ծրագրերի ու ոլորտների պատկանող բարձր եկամտաբերության առանձին ձեռնարկություններ, որոնք մոտակա ժամանակաշրջանում դեռ պետք է պահպանվեն պետական սեփականություն, շուկայական հարաբերություններին անցումը մեղմելու նպատակով: Վերջապես կան ձեռնարկություններ, որոնք առայժմ նպատակահարմար է տալ վարձակալության եւ այլն:

Կասկածից վեր է, որ ձեռնարկությունների մի մասը անհատույց կամ խորհրդանշական նվազագույն գներով հավասարաչափ սեփականաշնորհվելու է քաղաքացիների միջեւ, եւ դա կարելի է իրականացնել մի շարք երկրներում կիրառված փոխարկասոնների ձեւով: Բայց փոքր ձեռնարկությունները եւ շինարարության անավարտ օբյեկտները նպատակահարմար է վաճառել աճուրդային ձեւով: Միաժամանակ պետք է նշել, որ այդ ձեւերն ունեն իրենց ուրույն թերությունները: Աճուրդային ձեւը մեծ հնարավորություն է ընձեռում խարդախությունների ու չարաշահումների համար, իսկ փոխարկասոնային ձեւը բնակչության մեծամասնությանը կկանգնեցնի զգալի դժվարությունների, ինչպես նաեւ ժամանակի ու միջոցների ծախսի առջեւ, մինչեւ փոխարկասոնները կվերածվեն կոնկրետ ձեռնարկությունների բաժնետոմսերի: Այդ առումով ավելի նպատակահարմար է թվում սեփականաշնորհման անմիջական իրականացումը կոնկրետ ձեռնարկությունների մոտավորապես նույն եկամտաբերությունը եւ նույն նվազագույն գինը ունեցող բաժնետոմսերի միջոցով:

Ձեռնարկությունների սեփականաշնորհման ու աղաղեսականացման գործընթացը պետք է լինի բազմաձեւ:

Ելնելով հանրապետության ներկա տնտեսական ծանր դրությունից, մեզ պարտադրված համարյա պատերազմական վիճակից, մեր ժողովրդի նկարագրից, ինչպես նաեւ այն հանգամանքից, որ հողը գյուղացիներին սեփականաշնորհվեց կաղաստրային արժեքով, նպատակահարմար է թվում հավասարաչափ սեփականաշնորհումը կատարել ձեռնարկություններն իրենց մնացորդային արժեքներին մոտ նվազագույն գներով (հաշվի առնելով նաեւ եկամտաբերությունը, տեղը, տարածքը, եւ այլն) քաղաքացիներին վաճառելով (պահանջի դեպքում վարկի ձեւակերպմամբ): Նպատակահարմար է թվում նաեւ դրա միաժամանակ առաջացված տեմպերով իրականացումը մոտավորապես նույն եկամտաբերությունը եւ նույն նվազագույն գինը ունեցող 4 կամ 8 մասերից բաղկացած բաժնետոմսերի միջոցով: Բացի այդ, որպեսզի հավասարաչափ սեփականաշնորհվող ձեռնարկություններում ստեղծվեն գործունեա ու կարող բաժնետիրական ընկերություններ, նպատակահարմար է այդ ձեռնարկությունների 1/4 մասերի բաժնետոմսերը վաճառել աճուրդով, կուտակված դրամական միջոցներ ունեցողներին եւ օտարերկրացիներին:

Նպատակահարմար է հավասարաչափ սեփականաշնորհումը իրականացնել միաժամանակ, արագացված տեմպերով, համապատասխան ձեռնարկությունները 3/4 մասերով սեփականաշնորհելով քաղաքացիներին, մոտավորապես նույն եկամտաբերությունը եւ նույն նվազագույն գինը ունեցող 4 կամ 8 մասերից բաղկացած բաժնետոմսերի միջոցով (հաշվի առնելով նաեւ եկամտաբերությունը, տեղը, տարածքը, եւ այլն) քաղաքացիներին վաճառելով (պահանջի դեպքում վարկի ձեւակերպմամբ), իսկ մնացած 1/4 մասերի բաժնետոմսերը վաճառել աճուրդով:

Ձեռնարկությունների սեփականաշնորհման ու աղաղեսականացման գործընթացում պետք է պարբերաբար հաշվի առնվի նաեւ հանրապետության բնակչության մոտ կուտակված ազատ միջոցների չափն ու բաշխվածությունը, ինչպես նաեւ օտարերկրացիների կողմից այդ գործընթացում ակնկալվող ներդրումների չափը: Մասնավորապես, եթե տվյալ տարում սեփականաշնորհվող ձեռնարկությունների հաշվեկշռային արժեքների գումարը գերազանցի բնակչության ազատ միջոցների ու օտարերկրացիների ներդրումների գումարից, ապա ակնհայտ է, որ որոշ ձեռնարկություններ ու ձեռնարկությունների մասեր կվաճառվեն կուտակված միջոցներ ունեցողներին ու օտարերկրացիներին, իրենց հաշվեկշռային արժեքից ցածր գներով:

Տվյալ տարում սեփականաշնորհվելիք ձեռնարկությունների հաշվեկշռային արժեքների գումարը պետք է կառավարության կողմից որոշված չափով պակաս լինի բնակչության ազատ միջոցների ու օտարերկրացիների կողմից ակնկալվող ներդրումների գումարից:

Այդ նույն պատճառով հավասարաչափ սեփականաշնորհումը չի կարող իրականացվել միանգամից, առաջին տարվա ընթացքում: Այն պետք է կրկնվի մի քանի տարի, տարեկան մի անգամ: Ընդ որում, դա կնպաստի քաղաքացիների սոցիալական պաշտպանությանը եւ միայն թե շատ հավասար մեկնարկային պայմաններ ստեղծելուն:

Հավասարաչափ սեփականաշնորհումը մի քանի տարի, տարեկան մեկ անգամ կրկնվող գործընթաց է:

Արտոնությունների, վարկերի ու գեղչերի բազմազանությունն ու ոչ կոնկրետությունը, ՀՀ պետական ունեցվածքի սեփականաշնորհման ու տնօրինման պետական վարչության անվերահսկելի իրավասություններն ու պատասխանատվության ոչ հստակությունը կարող են առիթ հանդիսանալ ենթաօրենսդրային ակտերի ընդունման, խախտումների ու չարաշահումների համար:

Արտոնությունները պետք է լինեն հնարավորին չափ միջ եւ խիստ կոնկրետացված, իսկ նշված պետական վարչության իրավասություններն ու պատասխանատվությունները հստակ ու վերահսկելի:

ՎՈՒՂԻՅԱ ՄԱՆԱՍՅԱՆ
Տեխնիկական գիտությունների թեկնածու

FOR RENT
Furnished studios in Paris
Ave Foch and Champs-Elysées areas

Rent: $1200 a month
(same price 1,2 or 3 weeks)

Կահաւորուած սթիւտիոներ Փարիզի մէջ
Ֆորք Սայօ եւ Շան զէլիզէ թաղամասերը

Վարձ՝ $1200 ամիսը,
(1, 2 կամ 3 շաբաթուան համար նոյն գինը)
For Reservations:
Raymond Yezeguelian
34, Ave des Champs-Elysées, 75008 Paris
Tél.: (331) 43.59.65.81,
Fax : (331) 40.74.08.59

digitised by A.R.A.R.@

ՄՇԱԿՈՒՅԹ

«Paris Match»ը մի հարցազրույց է տպագրել, ուր հռչակավոր կինոասող Սիլվեստր Ստալոնեն երեւում է բոլորովին այլ կողմից: «Մկաններս ու վրձինս իմ երկու զենքերն են», սովորաբար ասում է նա: Դերասանի Լոս Անջելեսի տունն առաջին ցուցասրահն է, ուր ցուցադրվում են նրա կտավները:

«Ինչ որ ունեմ՝ լավն ու վատը, բոլորը ձեզ»

– Դուռ կրված եմ, նկարում եմ, գրում: Գժվում եմ արվեստի եւ երաժշտության համար: Այնուամենայնիվ, մարդկանց մեծամասնությունը համառորեն ձեզ ձեր անունն իսկ արտասանելու պանդուխտ անգրագետ մարդ է համարում:

– Հազար անգամ լսել եմ նույն միտքը. «Օ՜, դուք այնքան տարբեր եք, ինչ ես էի կարծում»: Սա ինձ ցավ է պատճառում, քանի որ ես մի փիչ գոռոզ եմ, մի փոքր արժանապատվություն ունեմ: Մարդիկ ուզում են ինձ ծաղրել: Ես շատ լավ գիտեմ, թե ես ով եմ, սակայն, այնուամենայնիվ, այդ վերաբերմունքն ինձ խանգարում է, քանզի այն աղտակ է մտքին:

– Դուք պատրաստ եք գրելը: Երբեւէ ցանկություն չե՞ք ունեցել բողոքել դերասանի արհեստն ու ամբողջովին նվիրվել գրելուն:

– Դրա մասին խորհել եմ: Երբ գրում ես, ամեն ինչ քո մասին ասում ես, ի ցույց ես հանում հոգիդ ու սիրտդ, դառնում խոցելի: Դերասանը սոսկ արտասանում է ուրիշների գրածները: Նա իսկապես վախ ունի գրվածքի հանդեպ, վախ՝ դեմ առ դեմ կանգնելու իր մտավոր անհաջողությունների հետ...

– Լինո՞ւմ է, որ դուք նույնպես վախենաք:

– Ինչպես բոլորը: Երբ վախենում եմ, գլուխս առաջ եմ խորում: Երբեմն ցցվում, մնում եմ: Ֆիզիկապես ոչ ոքից չեմ վախենում: Ֆիզիկական վախերը միշտ հաղթահարելի են: Ավերիչը գոյաբանական, հոգեկան վախն է, այն կարվածահար է անում ինչպես պարանոյան, կասկածը: Ես երկար ժամանակ կարծում էի, թե բոլորն էլ իմ լավն են ցանկանում: Ինչքան միամիտ էի: Ես սովորեցի լինել ցինիկ, զգույշ: Ամենից շատ սարսափում եմ այն մարդկանցից, որոնք քո վրա իշխանություն ունեն, քանի որ գիտեն այնպիսի բաներ, որ չէիր ուզենա բոլորն իմանան: Բոլորս էլ սվերոս կողմ ունենք: Շանտաժիստները հանցագործներ են, հոգու գողեր:

– Հավատո՞ւմ եք հոգեփոխությանը:

– Այո, ես ուզում եմ նորից ծնվել որպես կաչաղակ: Ուզում եմ նստել դաշտում եւ նայել կյանքին: Կաչաղակը տգեղ է, սակայն խելոք, խորհրդավոր: Ինձ դուր է գալիս, որ նրան հնարավոր չէ բռնել:

– Ձեզ դո՞ւր է գալիս, որ գերասդ եք:

– Հոգուս խորքում ես միշտ էլ փողոցի տղա եմ: Դժբախտաբար, այսօր չեմ կարող ուզածիս պես մաքուր գալ: Ես ապրում եմ աղակի փուչիկի մեջ: Ուր գնում եմ, ինձ հետեւում են, քննում: Մի օր ինձ վեր են բարձրացնում, հաջորդ օրը ոտքի տակ գցում: Այս ամենն ինձ ճնշում է...

– Դուք հարուստ եք հայտնի, իշխանություն ունեք: Ի՞նչն է ձեզ դպակասում:

– Ես ուզում եմ մերկ լինել մաքրով եւ Ֆիզիկապես: Ուզում եմ որեւէ բնամարիչ ինձ իմ կարողությունների սահմանին հասցնի, խելագարության աստիճան: Ուզում եմ մոռանալ՝ ասելով՝ «Միաս, արյունս, հոգիս, ինչ որ ունեմ՝ լավն ու վատը, բոլորը ձեզ»: Գեր մեկ անգամ մոռանալ, թե ես ով եմ եւ դա բացահայտել էկրանի վրա:

«Paris Match», 27 փետրվար 1992

ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Ճանապարհորդություն ասույթեն ի մանրապատում

❖ Գները բարձրացան ուրիշների, վաճառողներն էլ՝ իրենց այլին:

❖ Պատերազմական եւ հետպատերազմյան առաջին տարիներին շատերը ավելի հարգի էր, քան մաքուր մեղրը: Հետագայում մաքուր մեղրը ավելի հարգի էր, քան շատերը: Այսօր, վերջապես, եւ մեկը, եւ մյուսը արժանացան մեր խորին հարգանքներին:

❖ Առաջ կոմունիստը պարսավում էր պատմական անցյալի իդեալականացումը, հակակոմունիստները՝ ընդհակառակը: Այսօր հակակոմունիստները պարսավում են պատմական անցյալի իդեալականացումը, կոմունիստները՝ ընդհակառակը: Իբրեւ եզրակացություն. պատմական ներկան իդեալականացնում է եւ մեկի, եւ մյուսի շահախնդրությունը (իհարկե, հանուն ժողովրդի բարօրության վեհ գործի):

❖ Մի ժամանակ ոչ մի բանի պակասություն «չէինք զգում», որովհետեւ կարեւոր մի պակասություն էինք զգում: Այսօր...

❖ Լավատեսի խորհուրդը. հուսահատվելու կարիք չկա, հո այսպես չի մնա: Ավելի վատը տեսել ենք: Էլ ավելի վատը կարող ենք տեսնել:

❖ Դեպի ժողովրդավարություն տանող ճանապարհը անցնում է ոչ միայն թափվող արյան, այլեւ բարակող սամոնի միջով:

❖ Երեխաները մեր ապագան են, մենք՝ ներկան, ծերունիները՝ անցյալ հարակատարը, ննջեցյալները՝ անցյալ վաղակատարը, մեր հոգիներն անդրշիրիմյան կյանքում՝ անցյալ ապառնին: Եւ այդ ամենը՝ սահմանադրական եղանակով: Չծնվածներն են պայմանական եղանակը: Քերականությունը մոռացածները դիմեն իրենց դպրոցական երեխաներին:

❖ Փառք ազատ արձակված գներին, միսն առատորեն կախված է: Միայն թե ցամաք ծորի աղվեսի դունչը եթե չի հասնում, ապա հասատ՝ կամ միսն է փչացած, կամ գինը, կամ վաճառողը:

❖ Եթե գները ազատ չարձակվեին, միեւնույն է՝ պետական կալանից ոտքի փախչեին ընդհատակյա վերավաճառողների հեղափոխական գործունեության հետեւանքով:

Դեպի ասույթը վերադարձնող ճանապարհորդական բյուրոյի տնօրեն

ՎԱՐՈՒԺԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Հ. Գ. Անպատճառ ուղեւորներին. «Հղփացած կոշկակար» ֆիրմային հարկավոր են ֆիզիկոսներ, գրականագետներ, պատմաբաններ եւ մանավանդ փիլիսոփաներ: Կարիքավորներին մեծահոգաբար կտրամադրվի կարագ, երշիկ, ծու: Լրացուցիչ տեղեկությունների համար չգանգահարել (հավես չկա), այլ հերթ կանգնել «ուտեմ ուտեմ, չկշտանամ» խաչխորվածանոցի ծառայողական մուտքի մոտ, մեր կերածխմածը մարսելու բոլոր ժամերին: Վ. Ն.

ՀԱՆԱՊԱՐՀ

Մադոննայի մրցակիցները...

Ճիշտ է, նրանք Մադոննա չեն, բայց այս 100 տարեկան երկվորյակները նագոյայից, իրենց երաժշտական ընդունակություններով գլխապտույտ առաջացնող հաջողության են հասել Ճապոնիայում: Քին Նարիտան եւ Չին Քանին վերջերս թողարկել են իրենց առաջին երգի Քին-չանի եւ Չին-չանի լազերային ձայնասկավառակը:

Նշենք, որ երկվորյակները, որոնք վերջին շրջանում մեծ համբավ եւ ժողովրդականություն են վայելում հատկապես ճապոնական հեռուստատեսային ռեկլամներում,

չեն երգում, այլ պարզապես «հեյ-հեյ» տիպի կրկներգերով ծայնակցում են երեխաներին, մինչ այս վերջինները երգում են իրենց նախասիրած երգերը:

Առայժմ այս եզակի զույգի համերգային շրջագայությունների մեկնելու կամ տեսաֆիլմում նկարահանվելու մասին ոչ մի խոսք չի գնում: ■

Ջավեշական մեկնաբանությո՞ւն

Շվեդիան վաղուց հայտնի է մամուլի ազատությամբ: Սակայն այն, ինչ վերջերս կատարվեց, գերազանցեց ընթերցողների բոլոր ակնկալիները:

Հանրահայտ շաբաթաթերթերից «Գազետը» տպագրեց հազար կրոնանոց մի թղթադրամ կոչ անելով ընթերցողներին գնումներ կատարել դրանով: Հրատարակիչները իրենց այդ քայլը բացատրեցին որպես երկրում տիրող փողի արժեզրկման դեմ պայքարելու մի «ջավեշական» միջոց: Սակայն տպագրված թղթադրամները այնքան «իրական» էին, որ ոստիկանությունը հազարավոր բողոքներ ստացավ այն վաճառականներից, որոնք խաբվել էին եւ ընդունել դրանք իրենց ապրանքների դիմաց: Իշխանությունները փորձեցին առգրավել հանդեսի բոլոր օրինակները, սակայն 47 հազար տպաքանակ ունեցող թերթի նկատմամբ դա այնքան էլ հեշտ չէր իրագործելը:

Ջեռնարկատերերը վախենում են, որ որոշ ընթերցողներ արդեն իսկ կուտակած կլինեն բավական քանակությամբ կեղծ թղթադրամներ: ■

Վիժում... բժշկական ասպարեզում

Նախկին Արեւելյան Գերմանիայում, զանազան այլ ասպարեզներին առընթեր, բժշկական ասպարեզում եւս սարսափելի երեւույթների բացահայտումը դառնում է սովորական: Վերջին շրջանում Թուրինգիա նահանգի առողջապահական հիմնարկների աշխատողները հաստատել են, որ կոմունիստական վարչակարգի օրերին նորածին թերզարգացած երեխաներին ոչնչացրել են ջրով լի դույլերում: Ըստ «Դեր Շպիգել» հանդեսի, մինչեւ 1982 թ. երեքուրսի կանանց հիվանդանոցը խեղդամահ է արել 1 կգ-ից պակաս կշռող մանուկներին, դրանք գրանցելով որպես վիժումներ:

Պատճառաբանելով, թե այդ երեխաները առանց այն էլ մահվան էին դատապարտված եւ ապրելու երաշխիքներ չունեին, հիվանդանոցը սպառնացել է դատի տալ վերոհիշյալ հանդեսին: Այս բացահայտումը գալիս է ամբողջացնելու նախկինում հայտնաբերված նույնքան ցավալի բժշկական աղավաղումների այն երեւույթները, որոնք լայնորեն տարածված են եղել Արեւելյան Գերմանիայում: Այս վերջին դեպքի գրանցումը ստիպել է Թուրինգիայի իշխանություններին մանրազնին հետաքննություն անցկացնել եւ վերահսկողություն սահմանել բոլոր հիվանդանոցներում: ■

Գաղտնի ամուսնություն

«Սատանայական տողեր» հայտնի գրքի հեղինակ Սալման Ռուշդին, 44 տարեկան, վերջերս նշանվել է մի բանաստեղծուհու հետ, որի անունը Սկոտլենդ Յարդի խնդրանքով առայժմ գաղտնի է պահվում, նրա անձնական անվտանգությունն ապահովելու նպատակով:

Ինչպես հայտնի է, Ռուշդին ինքը երկար ժամանակ ստիպված էր եղել թաքնված կյանք վարել իր վերոհիշյալ գրքի հրապարակումից հետո, քանի որ Այաթոլլահ Խոմեյնին նրան մահվան էր դատապարտել իսլամի դեմ մեղանչելու համար:

Սա Ռուշդիի 3-րդ ամուսնությունն է լինելու: ■

Քույրը՝ միջնորդ

18 տարի առաջ Թուլան եւ Պեմը ամենեւին էլ քույրեր չէին, այլ պարզ պատճառով, որ Թուլան... տղամարդ էր: Այժմ, ինչպես «Playboy»-ում տպագրված նրա մերկ լուսանկարն է վկայում, նրա մարմնի բոլոր մասերն անճանաչելիորեն փոխվել են, եւ նա դարձել է ամենագեղեցիկ մանեկենների մեկը Անգլիայում: Բայց նա չի կարող ծննդաբերել: Այնպես որ, երբ վերջերս նա իր ամուսնանալու մտադրությունը հայտնեց, քույրն անմիջապես համաձայնեց միջնորդի դեր խաղալ եւ... հղիության շրջանը վերցնել իր վրա, հետագայում, անշուշտ, երեխային նրան նվիրելու պայմանով: Դե ինչ, ասված օգնական այն տղամարդուն, որը հայտնվելու է այս երկու քույրերի... արանքում: ■

Երիտասարդ նկարիչների աշխատանքների ցուցահանդես-վաճառք Կումայրիում

«Ստիլ» կոոպերատիվը վերջերս կազմակերպեց Կումայրիի երիտասարդ նկարիչներ Գեւորգ Եղիազարյանի, Հրանտ Միրզոյանի, Ավետիք Չքչյանի, Արամ Հակոբյանի եւ Նարեկ Ավետիսյանի գեղանկարչական ու քանդակագործական աշխատանքների ցուցահանդես-վաճառքը Մերկուրովի տուն-թանգարանում:

Կոոպերատիվի աշխատակիցներ Տիգրան Հարությանը, Արսուշ Մկրտչյանը, Մամիկոն Գինոսյանն ու Հայկ Հովհաննիսյանը ջանք ու եռանդ չեն խնայել այդ կարեւոր միջոցառումը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար: Ցուցահանդեսի բացմանը ներկա էին բազմաթիվ կումայրեցիներ եւ երեւանից հրավիրյալներ, որոնց թվում էին ՀՌԱԿ Հանրապետական վարչության անդամ Վարդան Պետրոսյանը եւ փոխատենապետ Կարեն Կոսանդոյանը: Բացման խոսքով հանդես եկավ Շահեն Խաչատրյանը: Իր օրինանքի խոսքն ասաց Շիրակի թեմի առաջնորդ Գրիգորիս արքեպիսկոպոս Բուդիքյանը: Արքեպիսկոպոսը մասնավորապես նշեց, որ այս ծանր օրերին ազգային մշակույթի զարգացման նպատակով կատարվող նման միջոցառումները կարեւոր դեր ունեն մեր ազգային ոգին բարձր պահելու գործում, որ մարդն ապրում է ոչ միայն նյութական, այլեւ հոգեւոր պահանջմունքներով:

Ներկաները մեծ հետաքրքրությամբ դիտեցին ցուցահանդեսը, որին ներկա էին ժողովրդական նկարիչ Հակոբ Հակոբյանը եւ երգահան-խմբավար Լորիս Եգնազարյանը: Հ. Հակոբյանը հավանություն տվեց այս միջոցառմանը եւ նշեց ցուցադրված աշխատանքների արժանիքները, հատկապես բարձր գնահատական տվեց Գ. Եղիազարյանի կտավներին: Հուսանք, որ Հայաստանի գործարար մարդիկ կհետեւեն «Ստիլ» կոոպերատիվի օրինակին: ■

Անցած օրերին

Կանսա՞ն նախագահին

Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը դիմել է Թաթարստանի Գերագույն խորհրդին կոչ անելով նորից քննարկել ինքնիշխանության մասին հանրաքվեի անցկացման հարցը եւ որոշում ընդունել, որը կհամապատասխանի Ռուսաստանի սահմանադրական դատարանի որոշմանը: Ինչպես հայտնի է, սահմանադրական դատարանը հանրաքվեի մասին որոշումը ճանաչել է հակասահմանադրական: ■

Փոփոխական Կրավչուկը

Ռուսաստանի նախագահ Բ. Ելցինի հեռ մարտի 17-ին տեղի ունեցած հեռախոսազրույցում Ուկրաինայի նախագահ Լ. Կրավչուկը հաղորդեց, որ փոխել է իր դիրքորոշումը տակտիկական միջուկային զենքը հանրապետությունից դուրս հանելու ժամկետի հետ կապված հարցի վերաբերյալ: Նա նշեց, որ, ըստ նախնական պայմանավորվածության, ամբողջ զինանոցը պետք է տեղափոխվի Ռուսաստան մինչեւ 1992 թ. հուլիսի 1ը:

Անցյալ շաբաթ Լ. Կրավչուկը հայտարարել էր, թե դադարեցնում է տակտիկական զենքի դուրս հանումը Ուկրաինայից, քանի որ մտավախություն ունի, թե այն կհայտնվի «չար ձեռքերում»: ■

Իսլանդիան բալթերի հետ

«Իսլանդիայի անդամակցությունը Բալթյան շրջանի 10 երկրների նորաստեղծ խորհրդում պետք է որոշվի ոչ թե նրա աշխարհագրական դիրքով, այլ Հյուսիսի հետ նրա կապերով», ասվում է մամուլում հրապարակված Լիսվայի Գերագույն խորհրդի նախագահ Վիտաուտաս Լանդսբերգիսի հայտարարության մեջ: Խորհրդարանի ղեկավարը գտնում է, որ «ներկա կապերն ավելի շատ բան են նշանակում, քան աշխարհագրության փաստացի ընկալումը» եւ հույս է հայտնում, որ «Դանիան եւ Նորվեգիան համանություն կտան այդ տեսակետին»: ■

Ճանաչեցին երեսուներեքը

Ինչպես հաղորդեցին Վրաստանի արտգործնախարարությունում, Վրաստանի անկախությունը ճանաչել է նաեւ Պերուն: Այդ երկիրը պատրաստակամություն է հայտնել Վրաստանի հետ հաստատել դիվանագիտական հարաբերություններ:

Պերուն Վրաստանի անկախությունը ճանաչած 33-րդ պետությունն է: ■

Գնացքի տոմսն ու հեռախոսի գինը

Մարտի 18-ից Բելառուսում երկու անգամ աճել է միջազգային հեռախոսակապի արժեքը: Վաշինգտոնի հետ 1 րոպե խոսելու արժեքը 48 ռուբլի է, Վարշավայի հետ 24 ռուբլի, Վիլնյուսի հետ 6 ռուբլի:

Մինսկ-Վիլնյուս գնացքի տոմսի արժեքը հիմա հավասար է այդ երկու քաղաքների միջեւ 2,5 րոպե տեւողությամբ հեռախոսազրույցի արժեքին: ■

Միլիոն ռուբլի հոնորար

Նովոսիբիրսկի «Պրոգրես» ֆիրման մեկ միլիոն ռուբլու չափով գործարք է կնքել մոսկվացի փաստաբան Կուզնեցովի հետ, որը հրավիրվել է ֆիրմայի տնօրեն, «Վերածնունդ» գերմանական միության փոխնախագահ Ալֆրեդ Նոլենբերգին պատշաճանելու համար: «Պրոգրես»ի տնօրենը մեղադրվում է բժշկության համար արժեքավոր հումք հանդիսացող եղջյուրների խոշոր խմբաքանակների առքուվաճառքի արտահանման մեջ: Նա կալանքի տակ է գտնվում մոտ 10 ամիս:

Ավելի վաղ Կուզնեցովը ՊԱԿի գներում Օլեգ Կալուգինի փաստաբանն էր:

Իրենք իրենց երկրում

Ինչպես հաղորդեցին Թուրքմենստանի նախագահի մամուլի ծառայությունում, «համաշխարհային դիվանագիտական փորձի համաձայն», Ս. Նիյազովը նշանակել է Թուրքիայում Թուրքմենստանի պատվավոր հյուպատոսներին: Նրանք են քուրդ Խալիլ Ուգուրը (նա Թուրքմենստանի շահերը կներկայացնի Անկարայում եւ Սամբուլում) եւ Նեժդեթ Գեոքթեփեն (Իզմիր):

Թուրքիայում Թուրքմենստանի լիազոր դեսպանը կնշանակվի մոտ ժամանակներս: ■

digitised by A.R.A.R.@

Սայրըս Վենսի առաքելությունը մոտենում է ավարտին

Արդեն հինգերորդ օրն է, ինչ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիի բանագնաց Սայրըս

Վենսը գտնվում է տարածաշրջանում: Ավարտելով երկօրյա բանակցությունները Ադրբեջանի ղեկավարների հետ, մարտի 19-ին Ս. Վենսը ժամանեց Երևան և նույն օրը երեկոյան մեկնեց Գյանջա, այնտեղից Ադդամ, որտեղից էլ մեքենաներով ուղևորվեց Ստեփանակերտ:

ԼՂՀ մեկնելուց առաջ Ս. Վենսը մասնավորապես նշեց, թե *«Իմ առաքելության հիմնական նպատակն է ծանոթանալ երկու կողմերի դիրքորոշումներին, հավատալ հնարավորին չափ շատ փաստեր և դրանք գեկուցագրի ձևով ներկայացնել ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին և Անվտանգության խորհրդին»*: Պրն. Վենսը հայտարարեց, թե ինքը բավարարված է նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի, վարչապետ Գ. Հարությունյանի և արտգործնախարար Ռ. Հովհաննիսյանի հետ ունեցած հանդիպումներով: *«Ես չեմ փորձում այստեղ որևէ ձևով կարգավորել ստեղծված իրավիճակը և նաև կոնֆլիկտը*, ասաց նա: *ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին և Անվտանգության խորհրդին ներկայացնելուց հետո, նրանք կընդունեն համապատասխան որոշումներ և կգործեն ըստ դրանց»*:

Նույն օրը պրն. Վենսը հանդիպեց նաև հանրապետության Գերագույն խորհրդի մի խումբ պատգամավորների հետ, այցելեց Նորքի զանգվածի հիվանդանոց, տեսնելու ԼՂՀ-ում վիրավորված հայ մանչիկներին ու խաղաղ քաղաքացիներին:

Նմանատիպ մի այցելություն էլ նա կատարել էր Բաքվում: Ինչպես հայտնեց խմբին ուղեկցող պատասխանատուներից մեկը, ադրբեջանական կողմը ցուցադրել է Խոջալուի դեպքերին նվիրված տեսահոլովակներ, Վենսին տրամադրել քարոզչական ուղղվածություն ունեցող փաստաթղթեր: Թե հայկական կողմին որքանով հաջողվեց այդ ուղղությամբ աշխատել, մեզ համար մնաց անհայտ: Թերևս արժեքավոր կլինեն երեկ Ստեփանակերտում տեղի ունեցած հանդիպումները, որոնք անշուշտ պրն. Վենսին ավելի շատ փաստեր կտան, քան Բաքվի և Երևանի հանդիպումները: ■

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կիրակի օրը, մարտի 22-ին, ժամը 10:30-ին տեղի կունենա Հայաստանի Հանրապետության պատգամավորական խմբակցության նախարարության Առաջին գնդի երդման արարողությունը:

Հասցեն՝ Նուբարաշեն 7: Հրավիրում ենք բոլոր մասնակցել ցանկացողներին:

Առաջին գնդի հրամանատարություն

Երևանի քաղաքագլուխը կմեկնի Երուսաղեմ

Ինչպես տեղեկացանք Երքաղխորհրդի արտաքին հարաբերությունների բաժնից, մարտի 29-ից մինչև ապրիլի 4-ը Երուսաղեմում տեղի է ունենալու մեծ քաղաքների քաղաքապետերի 12-րդ կոնֆերանսը: Այս տարի առաջին անգամ հրավիրված է նաև Երևանի քաղաքապետը: Կոնֆերանսի բեման է *«Զարգացող քաղաքներն անցումային ժամանակաշրջանում»*:

Քննարկվելու է երեք հարց, ինչպես կարելի է ստեղծել բազմամշակութային հասարակարգում, նկատմամբ ձեռք բերել, ինչպե՞ս պետք է կառավարի քաղաքապետարանը, որպեսզի քաղաքն սկսի աշխատել: Առաջին օրը նախատեսվում է հանդիպում Երուսաղեմի քաղաքապետի հետ: Այնուհետև կլինեն այցելություններ: Երևանի քաղաքապետը կհանդիպի հայ համայնքի հետ: Երուսաղեմի քաղաքապետարանի նախաձեռնությամբ, ճաշկերույթ կտրվի հայկական ընտանիքում: Բոլոր հրավիրվածների ծախսերը հոգալու է Երուսաղեմի քաղաքապետարանը:

«ՀՀՇ-ն ղեկավարվում է կոլեկտիվ մտքի կողմից»

«Մենք պետք է որոշենք, թե այս պահին ՀՀՇ-ն ի՞նչ գործելակերպ պետք է ունենա, ինչի՞ վրա պետք է հենվի, ի՞նչ քաղաքական կողմնորոշիչներ պետք է տա այն մարդկանց, ովքեր կգնան շարժման հետևից», ՀՀՇ համագումարի նախօրյակին տված մամլո ասուլիսում հայտարարեց այդ կազմակերպության վարչության նախագահ Տեր Հուսիկ քահանա Լազարյանը:

ՀՀՇ-ի կարծիքով, որևէ կազմակերպություն իրավասու չէ պետական շահ արտահայտել, ոչ մի կուսակցություն իրավունք չունի ասելու, թե ինքն է պետական շահերի արտահայտիչը: Այդ շահը իրականում արտահայտում են հանրապետության խորհրդարանն ու նախագահը, ասաց նա: Սահմանադիր ժողովի անհրաժեշտություն չենք տեսնում: Արցախի հարցը պետք է լուծվի քաղաքական ճանապարհներով, ԼՂՀ-ի մասնակցությամբ: Վարչությունը դեմ է, երբ Արցախի խնդիրը դառնում է հայ-ադրբեջանական հարաբերությունների խնդիր, շարունակեց նախագահը: Խոսելով ՀՀՇ-ի կուսակցության վերածվելու մասին, նա նշեց, որ դա մեկ որոշմամբ հնարավոր չէ անել, դա ընթացք է և դեղատոմս չկա: Այնուհետև, Տեր Հուսիկը ընդդիմության գոյությունը որակեց որպես ժողովրդավարության ամենամեծ նվաճում և նշեց, որ տարաձայնությունները հիմնականում պահանջատիրության հարցին են վերաբերում: *«ՀՀՇ-ն գտնում է, որ պահանջատիրությունն օրակարգի հարց չպետք է դարձնել, քանի որ Հայաստանն այս տարածքում պետք է կայանա»*, ասաց նա:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Թուրքիո հայոց պատրիարքը քննադատում է

Թուրքիո հայոց պատրիարք Գարեգին արք. Գազանճյանը Պոլսում հրապարակված մի հաղորդագրությամբ դատապարտել է թուրքական այն *«անպատասխանատու երջանակները»*, որոնք *«փորձում են Լեռնային Ղարաբաղի տագնապը ներկայացնել իբրև կրոնական պատերազմ»*: Պատրիարքը *«մտահոգիչ»* է գտնում հայ-ադրբեջանական բախումներն իբրև քրիստոնյա-իսլամական պատերազմ ներկայացնելու ոմանց ձիգերը: Նա պահանջել է *«կրոնը չգործածել որպես քաղաքական զենք»*, ավելացնելով, թե տարակարծությունները պետք չէ զենքով հարթել, այլ բանակցություններով: Մյուս կողմից, թուրք պատմաբանների մոտ զայրույթ է առաջացրել Թուրքիո հայոց պատրիարքի վերջերս կատարած այն հայտարարությունը, թե *«ազերիներն ավելի մոտ են թաթարներին»*: Թուրքական մամուլում հրապարակված հոդվածներում պատմաբանները ճգնում են աղացուցել, որ ազերիներն ու թուրքերը նույն ծագումն ունեն և նույն լեզվով են խոսում: ■

Կիրովական. պայթյուններն ու կրակոցները շատացել են

Մարտի 18-ի գիշերը պայթյունի ալիքը փշրեց Տիգրան Մեծի պողոտայի թիվ 40 եռահարկանի շենքերի ապակիները: Պայթյունից հետո ցնդեց հիշյալ շենքի կողքին գտնվող կոմերցիոն առևտրական կենտրոնը: Ընդհանրապես, վերջին օրերի գիշերները հաճախացել են պայթյուններն ու կրակոցները: Մերօրյա «քաջերն» այդ նույն եռանդով չէին կռվի Արցախում եր սահմանամերձ շրջաններում: Ներքին գործերի քաղաքային վարչությունը հիմնականում շարունակում է մնալ որպես չբացահայտված հանցագործությունների «շտեմարան»: ■

Մսի եւ կաթնեղենի արտադրությունը նվազում է

Ռուսաստանի գյուղատնտեսության նախարարության տվյալներով, ընթացիկ տարվա առաջին երկու ամիսների արդյունքներով կաթի արտադրությունը անցյալ տարվա համեմատ նվազել է 25 տոկոսով, մսի արտադրությունը՝ 20 տոկոսով, 29 տոկոսով կրճատվել է վերամշակման եր սննդի արդյունաբերության արտադրությունը:

Միևնույն ժամանակ, վերջին 7 օրերի ընթացքում զգալիորեն նվազել են գները Սանկտ-Պետերբուրգի, Նիժնի Նովգորոդի, Արխանգելսկի, Ռյազանի քաղաքային շուկաներում: Ռուսաստանի այլ քաղաքներում գները գործնականում մնացել են կայուն: Սննդամթերքի արժեքը շարունակում էր աճել միայն Եկատերինբուրգում, Նովոսիբիրսկում, Կրասնոյարսկում: Իսկ առաջատարը կրկին Մոսկվան էր, որտեղ մարտի 11-ից 18-ը գներն աճել են 10 տոկոսով: Ռուսաստանի գյուղատնտեսության նախարարության տվյալներով, անցյալ շաբաթ հանրապետությունում գները միջին հաշվով նվազել են, վարունգ՝ 25 տոկոսով, կաթ՝ 15 տոկոսով, իսկ լոլիկը, կարտոֆիլը եր բազուկը թանկացել են: Մսի գները գործնականում մնացել են նույնը: Տավարի միսը Մոսկվայում հիմա արժե 150-200 ռուբլի, բուսական յուղը՝ 80 ռ., կաթը՝ 25 ռ., իսկ Վորոնեժում, Սարատովում այդ ապրանքները հնարավոր է ձեռք բերել համապատասխան 60, 20, 12 ռուբլով: ■

«Գողն ինչ կուզի՝ մութ գիշեր»

«Լուրեր»-ով սկսվող հեռուստաերեկոն ոչ մի լավ բան չի խոստանում: Եր իսկապես, որքան հեռահարիր ու գեղեցիկ հաղորդում դիտելու հույսերը հետզհետե մարում են: Այդ զգացումը ուժգնանում է «Հեմիաթն է կանչում» հաղորդման ժամանակ, որ տասնամյակների ընթացքում մատուցվում է գրեթե անփոփոխ, նույն սցենարով, նույն տիկնիկներով, նույն մոնտաժներով, անգամ նույն արտահայտություններով ու նույն անիմաստ ժպիտներով: Համոզված եմ, որ իր երեխային նորմալ դաստիարակություն տալ ցանկացող ծնողները ինձ պես անջատում են հառուստացույցը, զավակների առանց այն էլ աղճատված հոգիները գոնե այդ «աղեսից» զերծ պահելու համար:

Այս համատարած միջակության ու ծանծաղության ֆոնի վրա ծիծաղելի են հնչում էկրանին հայտնված ժողովատգամավորների բողոքները, թե մեծ դժվարությամբ 10-15 տոկոսն են նվաճել հեռուստաթերթերի սուղ ժամերից: Իսկ այդ դժվարամատչելի 15 տոկոսներին հաջորդում են 15 տոկոսներ բազմանշանակալից պատգամներ, էկրանին սառող հնամենի խորհրդանիշեր եր այլն, եր այլն...

Ասում են «գողն ինչ կուզի՝ մութ գիշեր»: Էներգիայի եր այլ դեֆիցիտների այս օրերին հեռուստատեսությունը առավելագույնս հագեցնելու, բովանդակությամբ եր ձևով բազմազան դարձնելու փոխարեն այն կիլոմետրանոց խայտերով եր է գնում, օգտվելով այս ամենաթանկության մթնոլորտից: Տնտեսական, սոցիալական ճգնաժամը անուղղակիորեն անդրադառնում է նրա որակի վրա: Անգեն աչքով անգամ նկատելի է կադրային պակասը, ռեժիսուրայի աղքատությունը, նոր մտահղացումների բացակայությունը կամ գոնե դրսից լավն ընդօրինակելու կարողությունը:

Հեռուստատեսային ժամերի սահմանափակումը, որին արագ ու պատրաստակամորեն գնաց մեր կառավարությունը, ոչ այնքան էներգիայի խնայողության նպատակ էր հետապնդում, որքան նախկին գրաքննության վերականգնում: Այն հանգեցրեց տեղեկատվության հոսքի սահմանափակման եր կամայական մատուցման: Դա են վկայում ընտրվի անջատումներն ու միացումները (ո՞ւմ կամայականությամբ մենք դիտեցինք Սոբչակի ելույթը կես գիշերին եր չդիտեցինք գիշերային «Վեստի» ծրագիրը նույնպես կեսգիշերին, որն անջատվեց Ղարաբաղյան լուրերն սկսվելուն պես, ո՞վ է որոշում հեռուստադիտողի համար կարևորն ու անկարևորը, կարելին ու ոչ կարելին, ինչո՞ւ բազում մարգարեներ զրկվեցին ծմեռային օլիմպիադան դիտելուց):

Չեմ կարծում, որ հոսանքի խնայման այլ ձևեր բացակայում են: Կարծում եմ, ավելի հավանականը կառավարությունում այդ ձևերը որոնող լավատեղյակ մասնագետների բացակայությունն է:

ԱՐՄԻՆԵ ՕՀԱՆՅԱՆ
Ընթերցող

Լուրեր Հայրենիքից

Նոր ճանաչումներ

Չի բացառվում, որ ապրիլի սկզբներին Ռուսաստանը կճանաչի եւս երկու հարավսլավական հանրապետությունների՝ Մակեդոնիայի, Բոսնիայի ու Հերցեգովինայի անկախությունը: Այդ մասին հայտարարեց Ռուսաստանի արտգործնախարարության պատասխանատու աշխատակիցը: Նա խոսքերով, Մակեդոնիայի ճանաչման հարցը «դիչ թե շատ պարզ է»: Ինչ վերաբերում է Բոսնիային ու Հերցեգովինային, ապա փորձագետները ուսումնասիրում են Սարաեւոյում տեղի ունեցած եռակողմ համաժողովի նյութերը: Ինչպես հայտնի է, համաժողովում մուսուլմանական, սերբական եւ խորվաթական համայնքներին հաջողվել է մշակել հանրապետության ապագա կառուցվածքի փոխզիջումային բանաձեւ:

Դիվանագետը հաստատեց, որ անկախության ճանաչումից հետո Ռուսաստանը չի հեռանա այդ պետությունների հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հարցը: ■

Ռուսաստանցիները դժգոհ են

Ռուսաստանցիների մեծամասնությունը բացասաբար է գնահատում Գայդարի կառավարության կողմից իրականացված հունվար-փետրվար ամիսների տնտեսական բարեփոխումների արդյունքները: Հարցման մասնակիցների 60 տոկոսը դժգոհ է բարեփոխումներից, իսկ 18 տոկոսը դրականորեն են վերաբերվում: Հարցմանը մասնակցել են Մոսկվայի, Նիժնի Տագիլի, Նիժնի Նովգորոդի, Թաթարստանի եւ Կոմի հանրապետության 1500 բնակիչ:

Պահպանվում է Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի «թիմի» անդամների մեծամասնության ժողովրդականության նվազման միտումը: Սակայն նախագահի անձնական ռեյտինգը մնում է բավականին բարձր մակարդակի վրա: Բ. Ելցինին ամբողջությամբ վստահում են հարցման մասնակիցների 28 տոկոսը, մասնակիորեն 38 տոկոսը, Ռուսլան Խասբուլատովին համապատասխանաբար 16 եւ 37 տոկոսը, Ալեքսանդր Ռուցկոյին 19 եւ 34 տոկոսը, Գենադի Բուրբուլիսին 9 եւ 28 տոկոսը, Եգոր Գայդարին 13 եւ 31 տոկոսը:

Ուշագրավ է, որ այդ հարցման արդյունքների համաձայն, կառավարությանն ավելի շատ են վստահում, քան խորհրդարանին: ■

ԵԱՆՈՒՑՈՒՄ

ՀՅԴ «Նիկոլ Աղբալեան» ուսանողական միությունը երեքշաբթի, մարտի 24-ին, ժամը 12-ին հրավիրում է համաուսանողական հանրահավաք՝ նվիրված Արցախի ներկայիս կացությանն ու ուսանողության անելիքներին, որը կրելու է «Ուսանողությունը հանուն Արցախի» կարգախոսը:

Հանրահավաքը կայանալու է Համալսարանի հրապարակում:

Լուրերը ստացանք «Ազգ»-ի եւ մեր սեփ. թղթակիցների

Առաջարկում է ձեզ բարձր որակի, հուսալի եւ դիմացկուն ապրանքներ

ԱԳԱՄԱՆԴ

ապրանքա-ֆոնդային բորսայի «Երեւան» բրոկերային գրասենյակը

- Խառատային պտուտակահան հաստոց «Дзержинец» Ֆրեզերային գլխիկով, նոր, գինը՝ 245.000 ռուբլի:
- Ցեմենտատար «ЗиЛ» ավտոմեքենա, 10 տոննա բեռնատարողությամբ, գինը՝ 460.000 ռուբլի:
- Լեգիրված պողպատ «ШХ-15», 10 տոննա, մեկ տոննայի գինը՝ 46.000 ռուբլի:
- IBM 386 համակարգիչ, Ֆախի սալիկով եւ անհրաժեշտ ծրագրերով, ստանդարտ համակարգով, EPSON տպող սարքով, գինը՝ 690.000 ռուբլի:

Այս եւ այլ ձեզ հետաքրքրող ապրանքները ձեռք բերելու համար զանգահարեք՝ 56-48-83, 56-52-28:

Azg semi-weekly, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
Խմբագիր՝ Ս. ԱՎԵՏԻՔԵԱՆ
Editor H. AVEDIKIAN
Macintosh համակարգչային շարուածը Ռ.Ա.Կ. մամլոյ եւ տեղեկատուութեան կենտրոնի
ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Արշակունեաց 2

digitised by A.R.A.R.@